

այս մշարու ընթիվ դայ որ ին քեզաք կոռառնաւու
մնացած յասի ին մասաւով հօպու մզմէ մին ունց
անձ յանսափ նոր ամ չի ։ ուղարարած քա իմ
նաւնդամի գառ օմ ։ ուղարարած քայով վի ուղարակն ին
ուղարար և անձի լու խունակ մասաւու ամ չի ունց
նաւնդամ ։ ու անձ ապա ապա յան ու անց
մասին այս բառը ։ 2 Ե Լ Կ Ը Ճ Յ Ա Վ Ա Խ Ի Մ Գ Յ Ր Ա Կ Ա Յ

Նաւահանգստում բարձրացող թողից մթագնած
հարաւային կապոյտ երկինքը պղտոր է. տօթ արեւ,
կարծես մոխրագոյն բարակ շղարշի միջից, աղօտ նայում
է ծովին, Նա չի կարող անդրադառնալ զըի մէջ, որով-
հետև ջուրը շարունակ բեկրեկում է թիերի հարուա-
ծից, շոգենաւերի անիւների բաղխումից, կարատում է
թրքական ֆելիւգների և ուրիշ առագաստանաւերի
ցուուկներով, որոնք ամեն կողմից ակօսում են նեղուածք-
նաւահանգիստը, ուր հատաքարերի միջև կաշկանդուած
ծովի ազատ ալիքները, երենց վրայ սահող ահադին
ծանրութիւններից ճնշուած, բաղխում են նաւերի կո-
ղերը, ափերը, բաղխում են ու, հարուածներից փրփը-
րած, զանազան անպէտք իրերով կեղտուուած, քըթ-
մընջում։

Խարիսխների շղթաների շառաչը, ապրանք բերող
վագօններն իրար միացնելու շրիկոցը, չգիտես որտեղ
փողոցի սալաքարերի վրա ընկնող երկաթի թիթեղների
մետաղական կոծը, փալտի խուլ բաղխոցը, ապրանքա-
կիր կառքերի շաչիւնը, շոգենաւերի մերթ ականջ ծա-
կող սուր, մերթ խուլ մռունչը, բեռնաբարձ մշակների,
նաւաստիների ու մաքսատան զինուորների կանչերը —
այս բոլոր ձախները միախառնուել, աշխատաւոր օրուալ
խլացուցիչ նուագն են կազմել և, աղմկայոլ ծուփով,
փռուել մնացել նաւահանգստի վերեւ, երկնքում, կար-

ծես վախենալով սլանալ վերև ու այնտեղ ցնդուել։ Իսկ ներքեւից դէպի նրանց վերանում են նորանոր ավելներ — մերթ խուլ, որոտընդոստ, որ դզրդում են բոլոր շըր-ջակաւըր, մերթ սուր, շառաչելով, որ բզկտում են փո-շոտ, տօթակէզ օդը։

Հատաքարը, երկաթը, փալտը, նաւահանգստի քարուածքը, նաւերն ու մարդիկ — ամեն բան Մերկու- թիւն նուիրած բուռն-կըքոտ օրհներգի զօրեղ հնչիւն- ներ է արձակում։ Բայց ալդ օրհներգի մէջ մարդկանց հազիւ լսելի ձայները շատ թոյլ են ու ծիծաղելի։ Նոյն իսկ մարդիկ իրենք էլ, որ նախապէս ծնել են ալդ աղ- մուկը, նոյնպէս ծիծաղելի են ու խղճուկ, — նրանց թո- զոտ, պատառոտուն, ճարպիկ, ուսերին բարձած բեռան- տակ կզացած մարմինները, դէս ու դէն են վազվզում փոշու ամպերի, տօթի ու ձայների ծովի մէջ, և որքան չնչին են նրանք համեմատած զրջապատող երկաթեալ հսկաների, ապրանքի կուտերի, շառաչող վագօնների և ամեն բանի հետ, որ իրենք են ստեղծել։ Իրենց ձեռքի գործը ստրկացրել, դիմազուրկ է արել նրանց։

Ծանր հսկայ զոգենաւերը, գոլորշի արձակելով, մէկ սուլում էին, մէկ ֆշացնում, մէկ էլ մի տեսակ հեծում, և նրանց արձակած ամեն մի ձայնի մէջ հեգ- նական արհամարհանքի ծաղը էլ զգացւում դէպի սոս- կական, փոշոտ մարդուկները, որ սողոսկում էին նրանց տախտակամածների վրայ և խորունկ նաւակառերը լքցնում իրենց ստրկական աշխատանքի արդիւնքներով։ Արտասուելու չափ ծիծաղելի էին մշակների երկար շար- քերը, որոնք հազարաւոր պուդ հացահատիկներ իրենց ուսերի վրայ տանում, նաւերի երկաթէ ստամոքսներն էին լցնում, որպէս զի նոյն հացահատիկից մի քանի ֆունտ բան աշխատեն իրենց ստամոքսի համար։ Մի կողմից գջլտած, քրտնքումը կորած, խոնջութիւնից, աղմուկից ու տօթից բթացած մարդիկ, և միւս կողմից,

հզօր, առեմի առաջ փալվիրուն անձնեալ, անվրդով մեքենաներ, որոնք մարդկանց ձեռքով են ստեղծուած,— մեքենաներ, որոնք վերջի վերջոյ բան են դցւում ոչ թէ գոլորշիով, ալլ իրենց արարիչների մկաններով ու արիւնով... դաժան և սառն հեգնութեան մի ամբողջ վէպ է ալս համեմատութիւնը:

Աղմուկը—Ճնշում է մարդուս, փոշին ոռւնգերը գրգռելով աչք կուրացնում, տօթը—ալրում է մարմինն ու թուլացնում, և շրջապատի ամեն ինչ—թւում էր լարուած, հասուն, համբերութիւնը հատած, պատրաստ տրաքուելու, մի աշեղ փոթորիկ բարձրացնելու, որից յետոյ կարծես թարմացած օդի մէջ հեշտ պիտի լինէր ազատ ու թեթև շունչ առնել, երկրի վրայ հանգիստ պիտի իջնէր, իսկ այն փոշով աղմուկը, խլացուցիչ, գրգռող, թախծալի կատաղութեան հասցնող աղմուկը պիտի անհետանար և քաղաքում, ծովի վրայ, երկնքում խաղաղութիւն և պայծառ, փառաւոր պիտի լինի...: Բայց այդ միայն թւում էր: Ալդպէս է թւում նրա համար, որ մարդս դեռ լաւագոյն վիճակ ունենալուց յոյսը չէ կտրել և դեռ իրեն ազատ զգալու ցանկութիւնը մեռած չէ նրա մէջը...

Խուեց զանգակի տասն երկու համաչափ և հնչական ձայնը: Երբ որ վերջին պղնձի հնչիւնը մարեցաւ, արդէն աշխատանքի վալրենի երաժշտութիւնը համարեա թէ կիսով չափ մեղմացել էր: Մի ըսպէ յետոյ դա զժողութեան խուլ քըթմնջիւն էր դարձել: Ալդմ արդէն մարդկանց ձայնն ու ծովի ճղփիւնը աւելի էրն լսելի դարձել: Սա-ճաշի ժամն էր:

I

Երբ որ բեռնակիր մշակները, աշխատանքը թողած, աղմկալի խմբեր կազմելով ցըռւեցան նաւահանգստի Հորս բոլորքը ու մանրավաճառ կանանցից դանազան

ուտելեղէններ գնելով հէնց ալդտեղ, քարուածքի վրայ, ստուերուտ տեղերում էլ տեղաւորուած սկսան իրենց ճաշն անել, նրանց մէջ երևաց Դըիշկա Զէլկաշը, մի հին եփուած գալլ, որ նաւահանգստի աշխատաւորներին յալտնի էր իրեւ կորած-հարբան և ճարպիկ ու խեղախ գող: Նա բորիկ էր, ալիսէ մաշուած վարդիկիկով, գլուխը բաց, հագին օձիքը պատռած, չժէ կեղտոտ շապիք, որի տակից երևում էին նրա շարժուն, չոր ու սուր-սուր ոսկրները, մէջքին դարչնագոյն գօտի կապած: Նրա գզգզուած ալեխառն սև մազերից ու տրուրուած, սուր, գիշատիչ դէմքից երևում էր, որ նոր էր քնից վեր կացել: Նրա խարտեաշ բեխերից մէկի մէջ յարդի կտոր էր մնացել, միւս յարդի կտորը խառնուել էր ձախ երեսի տնածիլ մնացած կոշտ մազերի մէջ, իսկ ականջի ետևը խրել էր մի փոքրիկ, նոր պոկած լորու ճիւղ: Երկարահասակ էր նա, չոր չոր, փոքր ինչ կզացած, դանդաղաբար ման էր գալիս քարերի վրալ և իւր կեռ, գիշատչի քիթը դէս ու դէն շուռ տալիս, սուր հայեացք ձգում չորս կողմը. փալլում էին նրա մոխրագոյն սառն աչքերը և բանուորների մէջ մէկին փընտրում: Նրա թաւ ու խարտեաշ բեխերը, կատուի բեխերի նման, շարունակ ցնցում էին, իսկ քամակին գրած ձեռներն իրար էին շփում ու երկալն, ծուռ ու կպչուն մատները ջղալնօրէն իրար հիւսւում: Մինչև անգամ այստեղ, իրեն նման գջլտած ու խիստ նկատելի հարիւրաւոր շըջմոլիկների սինլքորների միջև նա իսկոյն աչքի էր ընկնում վալրի բազէի նմանութեամբ, որը երևում էր նրա գիշատչի լղարութեան ու դիտող քայլուածքի մէջ—նա ման էր գալիս արտաքուստ սահուն ու հանդարտ, բայց ի՞ներքուստ գրգռուած էր ու սրատես, նման այն գիշատիչ թռչնի թռիչքին, որին նա յիշեցնում էր:

Երբ որ հաստ մի խումբ շըջմոլիկ բանուորների

խմբի, որ նստած էին ածխով լեցուն քթոցների կորտի ստուերին, այդ խմբից նրան ընդառաջ վեր կացաւ մի թիկնաւէտ, ապօշ ու կապտկած քծաւոր գէմքով և ճանկուռած վզով մարդ, որ ըստ երևոյթին նորերս մի լու ծեծ էր կերած։ Նա վեր կացաւ տեղից ու նրա հետ կողքովը գնալով ցած ձայնով տաց։

— Կամաւորի նաւոստիները երկու հակ շորեղէն են տակով արելու։ Փնտրում են Լսում ես, Գրիշկա։

— Հա, — հարցրեց Զելկաշը, հանդարտ կերպով աչքովը նրան չտփելով։

— Ինչպէս թէ — հա։ Ասում եմ փնտրում են, Ուրիշ ոչինչ։

— Զիինի ինձ էին հարցնում, որ օգնեմ։

Եւ Զելկաշը սուր ժպիտով նայեց այն կողմը, ուր կամաւոր նաւատառմղի պահեստներն էին շինած։

— Դէ կորիր, գնա։

Ընկերը լետ դարձաւ։

— Հէյ, սպասի, եդ ով է երեսդ էդպէս նխշել փես են ներկել հա, . . . եստեղ երքում Միշկալին հօ չես տեսել։

— Շատ ժամանակ է տեսած չեմ, — կանչեց սա իւր ընկերների մօտը գնալով։

Զելկաշը առաջ գնաց, և ամենքն էլ, իբրև լաւ ծանօթի, դիմաւորում էին նրան։ Բայց նտ, որ միշտ զուարթ էր լինում ու կծու խօսող, այսօր, ինչպէս երկում է, սիրտ չունէր ու հարցմունքներին կարճ կտրուկ պատասխան էր տալիս։

Որտեղից որ էր ապրանքի հակերի ետևից նրա առաջն ելաւ մաքսատան պահապանը՝ մուգ կանաչ գոյն նի, փօզոտ ուղիղ ձգուած, կուռի պատրաստ։ Նա Զելկաշի ճամբան կորեց ու սպառնական դիրք բռնեց — ձախ ձեռը ձգեց դաշունի կոթին, իսկ աջը մեկնեց, որ Զելկաշի օձիքից բռնի։

— Կանգնիր։ Ո՞ւր ես գնում։

Զելկաշը մի քայլ լեռ քաշուցաւ, աչքը պահապանի վրայ ձգեց ու չոր-չոր ժպտաց։

Պահապանի կտրմիր, բարեսիրտ-խորամանկ դէմքն աշխատում էր գաֆան արտալայտութիւն ստանալ, ուստի և փքուեց, գլորացաւ, կրակի գոյն առաւ, լոնքեքը կիտեց, աչքերը չուեց ու շատ ծիծաղելի դարձաւ։

— Քեզ արդէն ասուած է չհամարձակուիս նաւահանգիստ մտնել, ոսկըներդ կջարդեմ։ Իսկ դու էլի՞,— պատնագին կանչում էր պահապանը։

— Բարով, Սեմենը, շատոնց է տեսնուած չէինք, — հանդարտ կերպով ողջունեց Զելկաշն ու ձեռքը երկարացրեց։

— Սկի էլ չտեսնէի երեսդ։ Դնա, գնա……

Բայց էլի Սեմենը նրա ձեռքը սեղմեց։

— Ինձ մի այս տասա, զարունակեց Զելկաշն առանց իւր կպչուն մատների միջից բաց թողնելու Սեմենը ձեռքը և ընկերական-բարեկամաբար թոթուելով, — Միշկալին չես տեսել։

— Ե, բնչ Միշկա է էդ։ Ոչ մի Միշկա չեմ ճանաչում։ Դնա, հեռացիր, ախպեր, թէ չէ պահեստի կառավարիչը կտեսնի, նո հո……

— Եէկ Միշկան, էլի, էն որ անցեալ անգամ հետակոստըմալիս վրայ աշխատում էր, — շարունակեց Զելկաշը։

— Որի հետ գողութիւն էք անում, ախպէս ասաւ Քու Միշկալիդ հիւանդանոց տարան, ոտքը թուշի տակ էր մնացել։ Դէ, ախպէր ջան, քեզ խօսք են տսում, գնա էստեղից գնա, թէ չէ վզակոթիդ տալով դուրս կանեմ……

— Վա, դու բանը տես. բաս ասում ես — Միշկալին չեմ ճանաչում…… Ուրեմն ճանաչում ես եղել։ Ինչի՞ ես ախպէս չարացած, Սեմենը……

— Գիտես ինչ կայ, Գրիշկա, դու իմ առաջս կորեկ
մի ցանիլ, վեր կաց, հեռացիր....

Պահապանը սկսաւ նեղանալ և, չորս կողմը նա-
լելով, աշխատում էր իւր ձեռքը Զելկաշի պինդ ձեռ-
քեց ազատել: Զելկաշը իւր թաւ յոնքերի տակից հան-
դարտ կերպով նայում էր նրան, քթի տակ ծիծաղում
և, առանց նրա ձեռքը բաց թողնելու, շարունակում
էր զրոյց անել.

— Դու ինձ մի շտապեցնի! Մի լու խօսեմ, կշտա-
նամ — կգնամ: Դէ, ասա, ո՞նց ես... կինդ, երեխերքդ —
առողջ են: — Եւ աչքերը նենդաբար փալլեցին ու, ծաղ-
րաբար ժպալիս ատամները բաց անելով աւելացրեց,
— ուզում եմ քեզ զոնաղ գամ — բայց սկի մի ժամանակ,
չի լինում, — ո՞ր ասես խումից աչք բանալու ժամանակ
չունիմ....

— Դէ... դէ... գու ալդ բաները լող....: Դու...
հանաք մի անի, ծռտիկ սատանալ: Տես, ախանք, հո-
միտք չունիս տներում էլ, քուչեքում էլ թալան անելու:

— Ինչի՞ս է: Ալստեղի եղածն էլ ինձ ու քեզ հե-
րիք է: Հաւատա, հերիք է, Սեմենը: Ա՛լ տղայ, Էլի-
ես երկու հակ ապրանք պարտըկել....: Տես, Սեմենը,
զգոյշ կաց, չըռնուես....:

Սեմենը, Զելկաշի աներեսութիւնից վրդովուած,
սաղ մարմնով զողողաց ու թուքերը շաղ տալով աշ-
խատեց մի բան ասել: Զելկաշը բաց թողեց նրա ձեռքն
ու երկալն քալլեր փոխելով յետ գնաց դէպի նաւա-
հանդստի գարպասը: Պահապանը, անզուսպ հայհոյանք-
ներ թափելով, գնում էր նրա ետևից:

Զելկաշը զուարթացաւ, նա ատամների արանքով
կամաց շվշացնում էր և, ձեռները վարտքի գրպանը
դրած, աջ ու ձախ սուր ծաղը շաղ տալով, ազատ մար-
դու դանդաղ քալլուածքով առաջ գնում: Յետևից նրան
էլ միւնոյն ձեռվ էին պատասխան տալիս:

—Տեսար, Գրիշկա, ոնց են կառավարելուները քեզ պահպանում, —կանչեց մէկը բեռնակիրների միջից, որոնք արդէն ճաշը վերջացրած, գետնին վէր ընկած հանգստանում էին:

—Ես հո արջմոլիկ եմ—դէ Սեմենըչն էլ հոգս է քաշում, որ ճամբէս չկորցնեմ, չմոլորուիմ,—պատասխանեց Զելկաշը:

Դարպասին հասան: Երկու զինուոր տնտղեցին Զելկաշին ու թեթևակի բոթելով նրան փողոց ձգեցին:

—Զթողնէք ներս գալ, —կանչեց Սեմենըչը, որ նաւահանգստի բակումն էր մնացել:

Զելկաշը փողոցը կտրեց անցաւ և նստեց օղետան դրան առաջ սաքուի վրայ: Նաւահանգստի դարպասից շառաչելով գուրս էր գալիս բեռնած կառքերի անվերջ շարքը: Նրանց ընդառաջ վազէ վազ գալիս էին դատարկ կառքեր, որոնց մէջ նստած կառավանները վերվեր էին թռչութում: Նաւահանգիստը ոռնացող որոտ, կծու փոշի էր արձակում ու գետինը դղբջում:

Զելկաշը, որ սովոր էր այս կատաղի խառնիճաղանձին, Սեմենըչի դէպքեց գրգռուած, խիստ ուրախ էր: Նրա առաջն էր մի խիստ շահաւէտ գործ, որ քիչ աշխատանք ու մեծ ճարպիկութիւն էր պահանջում: Նպատակ էր, որ ալղքան ճարպիկութիւն կունենալ և, աչքերը կոցած, երևակալում էր, թէ ինչպէս վաղը քէֆ էր անելու երբ ամեն բան արած, վերջացրած ու իւր գրպանումն էլ թղթագրամներ կլինեն... Ցետու միտքն ընկաւ ընկերը Միշկան, որ շատ հարկաւոր պետի գար ալս գիշեր, թէ որ ոտքը կոտրած չլինէր: Զելկաշը էր մտքում հալի՛ուանք թափեց մտածելով, թէ գուցէ առանց Միշկալին չկարողանալ էլ բանը գլուխ բերել: Տեսնես գիշերս ինչպէս է լինելու...: Նա նալեց երկնքին ու փողոցի երկարութեամբ:

Նրանից մի վեց քառ անդին, մայթի մօտ, քա-

բուածքի վրայ, մէջքը սաքուին դէմ արտծ նստել էր
մի երիտասարդ՝ կապուտ զոլաւոր շտպիկ ու նոյնպիսի
վարտիկ հագած, սուքին տրեխ, գլոփին ծակ շեկ գըլ-
խարկ. Նրա կողքին դրած էր փոքրիկ տոպրակն ու
անկոյթ գերանդին, որ փաթաթած էր խոտէ լախով
ու խնամքով էլ խնաբով կապուծ։ Երիտասարդը լանսա-
թիկունք էր, պնդակազմ, շիկայազ, արեակէզ ու հող-
մահար դէմքով և խոշօր կապուտ աչքերով, որոնք բա-
րեհոգի ու վստահ կերպով նայում էին Զելկաշին։

Զելկաշը առամները բաց արաւ, լեզուն հանեց և,
երեսին զարհուրելի արտայալտութիւն տալով՝ աչքերը
շուած նրան յառեց։

Երիտասարդը, ակզրում տարակուսած, աչքերը
թարթեց, բայց յետոյ լանկարծ քրքչաց ու ծիծաղելիս
ասաց — ա! դու իսենթուլիկ և համարեա թէ առանց
գետնից բարձրանալու, փոշու մէջ տոպրակը քաշ տա-
լով ու գերանդու կրունկը քարերին խփելով, անշնորք
կերպով վեր կացաւ տեղից ու Զելկաշի կողքին նստեց։
— Հը, ախպեր, երևում է լաւ ես քէփ արել . . . —
ասաց նա Զելկաշի վարտիկիկը քաշելով։

— Հա, տղայ, եղաէս մի բան եղել է, — պարզապէս
խոստովանուեցաւ Զելկաշը։ Նրան հէնց մի անդամից
զիւր եկաւ այս մանկական պայծառ աչքերով, առողջ,
բարեհոգի երիտասարդը։ — Հնձից ես դալիս։

— Հա, հնձից . . . Անունը կայ, բայց ամանումը ո՞ր
ասես զատ չկայ, Բաներս շատ փիս են։ Հնձուորներին
վերջ, վճար չկայ։ Սովածները սաղ թափուել են դուրս . . .
աշխատանքը գին չունի, սկի ձեռ առնելու բան չէ։
Կուբունում երեք աբասի են տալիս . . . Է՛լ գիտի ժամա-
նակ . . . Առաջներն, ասում են, երեք, չորս, հինգ մա-
նէժ են տալիս եղել . . .

— Առաջները . . . Առաջները. ինչ կասես դու, մե-
նակ ռուս մարդու երես տեսնելու համար մի երեքնոց

Եին տալիս: Մի տասը տարի առաջ ես ինքս հէնց դըանով էլ ապրուստ եմ ճարել: Հէնց որ մի ստանիցա չէի մտնի ու յայտնի, թէ ռուս եմ, ամեն կողմից կգալին, մտիկ կտալին, կզարմանալին ու—երեքնոցդ ստացիր: Նամ էլ մի լաւ կուտացնէին, կխմացնէին: Կաց քանի սիրտդ կուզի, ապրի քեզ համար:

Երիտասարդը սկզբում, Զելկաշի պատմածները լըսելով, բերանը բաց վարանման տպշութիւնը կլոր գէմքին, ականջ էր գնում, բայց յետոյ գլխի ընկնելով, որ այս չէլքոտը սոււշ է ասում, շրթունքները ցմփացըց ու ծիծաղեցաւ: Զելկաշը, ժպիտը թաքցրած, պահել էր իւր լըչութիւնը:

— Հէնց գիտենաս ուղիղ բան լինի ասածդ, ես էլ ականջ եմ գնում ու հաւատում...: Զէ, Աստուած վըկայ, որ առաջներն էնտեղ...

— Բաս ես ինչ եմ ասում որ...: Ախր ես էլ հէնց էն եմ ասում, թէ էնտեղ...

— Դէ զնա բանդ...,—ձեռքը թափ տուաւ երիտասարդը:—Կօշկակար հո չես: Կամ գերձբի ես... ինչ բանի ես գոււ:

— Ե՞ս,—հարցըց Զելկաշն ու, միտք անելով, ասաց:—Զկնորս եմ...

— Զկնորս: Հա: Ո՞նց է, ձուկ ընկնում է...

— Ինչո՞ւ ձուկ: Էստեղի ձկնորսները հո մենակ ձուկ չեն բռնում: Աւելի խեղդուած մարդիկ, հին խարիսխոներ, ջրի տակովն եղած նաւեր—ամեն բան: Դրա համար ջոկ կարթեր կան...

— Դուս տու, դուս տու....: Զլիք էն ձկնորսներից լինիս, որ իրանք իրանց համար երգում են.

Յամաք ափին թոռ ենք գցում,

Նատ անգամ էլ ամբարներում

Թէ ռասստ էկաւ և' տներում:

— Դու դըանց տեսել ես,—հեգնութեամբ հարցւաւում

ըեց Զելկաշը նրան նայելով ու մտածելով, որ այս պատուական երիտասարդը շատ յիմարն է:

— Զէ, որտեղ պիտի տեսած լինիմ, լսել եմ...

— Հաւաննում ես:

— Դրանց: Խնչու չէ...: Ոչինչ, կան էլի, իրենց համար ազատարձակ մարդիկ են...:

— Ի՞նչ է, ո՞նց է ազատութիւնը...: Սիրում ես:

— Ո՞նց թէ սիրում եմ: Խնքդ քու գլխի տէրն ես, ուր ուզում ես—զնա, ինչ ուզում ես—արա...: Եղ ինչ խօսք: Թէ որ մի քիչ կարգին ապրուստ ունենաս ու վզիդ էլ բեռը չինի, —դրանից էլ լաւ բան: Քէֆ արա քանի սիրտդ կուզի, մենակ Աստուածդ մտահան մի անիր...:

Զելկաշը արհամարհանքով թքեց և երիտասարդից երեսը շուռ տալով կտրեց իւր հարցմունքները:

— Հէնց ինձ վեր առնենք...—յանկարծ ոգեսորուեցաւ երիտասարդը:— Հէրս որ մեռաւ, շատ քիչ կարողութիւն մնաց, մէրս պառաւ. էր, հողը ուժը կորցրած, ինչ անէի: Հո պէտք էր ապրել: Բայց ո՞նց: Զըգիտես: Միտք ես անում, արի, մի հարուստ տեղ տընփեսալ գնամ: Շատ լաւ: Գոնէ աղջկալ փայը ջնկ հանէին...: Զէ—աներդ, դև է հո, ինչի՞ կ'զոկի որ: Թէ գնա ու էնքան ժամանակ... տարիներ... նրա համար տանջուի: Տեսնում ես ինչ բան է: Համա որ մի հարիւր լիսուն ռուբլի դատած լինէի, իսկոյն պինդ կըկանգնէի ու ցոյց կտալի էդ անտիպին: Ուզում ես Մարփայի բաժինը ջոկ հանել: Զէ. պէտքս չէ: Փառք Աստուծու, գիւղում հո մենակ Մարփան չիք. աղջիկ շատ: Էն վախտը դէ բոլորովին ազատ, իմ գլխիս տէրը կըլի: Նէի...: Ե՛,—երիտասարդը հոգոց հանեց: Իսկ հիմի ճար չկալ, պէտք է տնփեսալ գնալ: Ես էնպէս էի կարծում, թէ էս է, կուբայն կդնամ, մի երկու հարիւր կաշխատեմ — պրծաւ. աղա ես որ կաս...: Են ինչ...հէչ

զատ դուրս չեկաւ։ Ե՞հ, ուզես-չուզես տնփեսալ կդառնաս։ Ծառալ...։ Քանի որ ես իմ ունեցածովս սկի չպի-տի կարողանամ եօլալ գնալ... ամեննեին։ Ե՞հ—Հէ—Հէ...։

Տղան ամենևին չէր ուզում տնփեսալ լինել։ Մինչեւ անգամ նրա գէմքը աղօտացաւ ու տխրեց։ Նա ծանր ծանր շարժուեց գետնի վրալ ու դրանով Զելկացին սթափեցրեց մտախոհութիւնից, որի մէջ թաղուել էր նրա խօսքերի վրայ։

Զելկաշն զգում էր, որ էլ չի ուզում խօսել, բայց չգիտես ինչու դարձեալ հարցրեց։

—Նիմի ուր ես գնում։

—Ուր պիտի գնամ։ Յայտնի բան է տուն։

—Ախպէր ջան, ես ինչ գիտենամ... բալքի թուրքի երկիրն ես գնալու...։

—Թուրքի եր կի-ըը՛..., —երկարացրեց երկտասարդը։ —Եդ ո՛ր քրիստոնեան է գժուել, որ թուրքի երկիրը գնալ։ Բան ասաց...։

—Նատ ախմախն ես էլել, —հոգոց հանեց Զելկացը ու նորից երեսը դարձրեց նրանից, ալս անգամ արդէն զգալով, որ հէջ մէկ բառ չի ուզում ասել նրան։ Այս առողջ գեղացի երկտասարդը նրա մէջ մի բան էր զարթեցնում...։

Անմեկին, ծանր հասունացող, որտամաշ մի զգացմունք ներսդին, մի խորունկ տեղ շարժւում էր և նրան արգելք լինում ուշքը կեդրոնացնելու և մտածելու այն ամենի վրալ, ինչ որ պէտք էր այս գիշեր անել։

Անպատիւ եղած երկտասարդը ցած ձայնով մի բան էր քրթմնջում՝ երեմն-երբեմն շըջմոլիկի վրալ ծուռ-ծուռ նալելով։ Նրա թշերը ծիծաղելի կերպով փըքուեցան, շրթունքները բաց եղան ու նեղցած աչքերը սկսան խիստ շուտ-շուտ ու ծիծաղելի բաց ու խուփ լինել։ Պարզ երևաց, որ նա չէր սպասում, թէ այս մե-

ծաբեխ չլոտի հետ իւր խօսակցութիւնն ալսպէս շումը
ու անսլատիւ կերպով կվերջանալ:

Զլոտն ալլ ևս նրա վրայ ուշադրութիւն չէր դարձ-
նում: Նա մտախոհ շվշագնում էր ու նստած տեղը-
մերկ ցեխոտ կրունկովը բախում տալիս:

Տղի սիրտն ուզում էր իւր ստացած վիրաւորանքի-
տեղը հանել:

—Եի, ձուկ բռնող: Դու շնւտ-շուտ ես հարբում,
—սկսեց նա, բայց նոյն բոպէին ձկնորսն արագութեամբ
նրա կողմը դարձաւ ու հարցրեց.

—Լսիր, տղար: Կուզես էս գիշեր հետս գործ ա-
նել. հը՞ւ Շուտ ասա:

—Ի՞նչ գործ, —կասկածանքով հարցրեց երիտա-
սարդը:

—Դէ, ինչ... ինչ որ տամ...: Ձուկ բռնելու կը-
գնանք. թի կքաշես...:

—Լաւ...: Ինչո՞ւ չէ, կդամ: Աշխատել կարելի է:
Միայն թէ... վախեմ փորձանքի մէջ ընկնենք: Աչքիս
խիստ ծուռն ես երեւում... մութ մարդ ես...:

Զելկաշը իւր կրծքի ներսը էրեցքի պէս մի բան-
դգաց ու սառն չարութեամբ ցած ձայնով ասաց.

—Որ խելքդ զատ չի կտրում, լաւ է սուս անես:
Թէ չէ էնպէս գոգրիդ կհասցնեմ, որ ուղեղդ ցըիւ
գալ...:

Նա նստած տեղիցը վեր թռաւ, ձախ ձեռքով քա-
շեց ընչացքը, իսկ աջ ձեռքը սեղմեց, երկաթէ ջլուտ-
բռունցք կազմեց, ու աչքերը փալլատակեցին:

Տղան վախեցաւ: Նա շտապով չորս կողմը նալե-
ցաւ և, վեհերկոտութեամբ աչքերը թարթելով, նոյն-
պէս վեր թռաւ գետնից: Նրանք սուս ու փուս աչքով
իրար էին չափում:

—Հը՞ւ, —գաժան կերպով հարցրեց Զելկաշը: Նա
եռ էր գալիս ու ցնցւում ալն անսլատութիւնից, որ

կրեն հասցըել էր ալս հորդուկը, որին նա խօսակցութեան միջոցին բոլոր ժամանակը արհամարհում էր, իսկ ալժմս լանկարծ սկսաւ սաստիկ առել այն բանի համար, որ նա ալսպէս առողջ էր և անարատ կապոյտ աչքեր, արևոտո երես, կարճ, պինդ ձեռքեր ունէր, որ մի տեղ, թէպէտ չգիտէր որտեղ, ունէր իւր գիւղը, գիւղում ունէր տնակ, որ հարուստ գիւղացին նրան տնիկեսալ էր ուզում առնել. նա ատում էր ալդ երիտասարդին նրա ամբողջ անցեալ ու ապագայ կեանքի պատճառով, բայց ատում էր աւելի այն պատճառով, որ նա, իրեն Զելկաշի հետ համեմատած այս երեխան, համարձակում էր սիրել ազատութիւն, որի ոչ արժէքը գիտէր և ոչ էլ նրան պէտքն էր դա: Միշտ անհաճոլ է տեսնել, որ այն մարդը, որին քեզանից վատ ու ստոր ես համարում, սիրում կամ ատում է նոյն բանը, ինչ որ դու, և ալդպէսով քեզի նման է գառնում:

Երիտասարդը նայում էր Զելկաշի վրայ ու զգում, որ նա իրա աղան է:

—Ես հո...—ասաց նա, —չէ չեմ ասում...: Ուրախ էլ եմ: Ես էլ գործ եմ վնարում: Ինձ համար մէկ բան է, քեզ մօտ եմ աշխատել, թէ ուրիշի: Իմ ասածս միայն էն էր, թէ դու հէջ բանուոր մարդու կերպարանք չունիս... խիստ իք... չլչլոտ ես: Դէ, ես հօ հասկանում եմ, որ էդ բանը... ամեն մարդու գըլխի էլ կարող է գալ: Տէր Աստուած, ինչ է, հարբած մարդ տեսած չեմ, ինչ է: Է՛, ինչքան կուզես... հլաքեզանից էլ փոքրը:

—Դէ, լաւ, լաւ: Ուրեմն խօսք ես առլիս, —արդէն աւելի կակղած հարցըեց Զելկաշը:

—Ե՞ս...: Հապամ...ուրախութեամբ: Գինն ասա:

—Գինը—աշխատանքի գորա է: Տեսնեմ ինչ աշխատանք կունենամ: Այսինքն թէ, ինչքան ձուկ կը ընենք...: կարելի է մի հնգանոց ստանաս: Հասկացար:

Բայց այստեղ արդէն բանը փողի վրալ էր, և գեղացին ուզում էր, որ այդ բանի մէջ ինքը ճշտապահ լինի և միևնույն ճշտապահութիւնը պահանջում էր նաև իրան գործ տուողից։ Նրա մէջ նորից կասկած ու անվստահութիւն ծագեցաւ։

—Եգ ինձ, ախաբեր ջան, ձեռք չի տալ։ Դու ինձ մի հաստատ բան ասա...։

Զելկաշը իւր դերի մէջ մտաւ.

—Ի՞նչ ես վռազում, համբերի։ Արի տրախտիր դնանք։

Եւ նրանք սկսան կողք կողքի գնալ փողոցով, Զելկաշը՝ աղայի կերպարանք առած, բեխերը ոլորելով, տղան՝ կատարեալ հնազանդութեան արտայալութեամբ, բայց դարձեալ վտխվխելով ու տարակուսանքով լի։

—Անունդ ինչ է—հարցըց Զելկաշը։

—Գաւրիլա, —պատասխանեց երիտասարդը։

Երբ որ նրանք մտան կեզտոտ ու մխոտած պանդոկը, Զելկաշը մօտ գնաց դախլին, սովորական մուշտարու եղանակով պատուիրեց մի շիշ օղի, շչի, մսէ խորովու, թէլ և, այս ամենը մէկ էլ կրկնելուց լետով, կարճ կտրեց. «Քոլորը պարտքի»։ որին դախլդարը լուռ գըլխով արաւ։ Այս բանի վրալ Գաւրիլան մի անգամից խիստ մեծ յարդանք զգաց դէպի իւր աղան, որը, չբնալելով շալվերի կերպարանքին, մի այսպիսի անուն ու վարկ ունէր։

—Դէ, հիմի մենք կճաշենք ու ոնց որ պէտքն է կիսուենք։ Դու մի քիչ սպասի, ես մի տեղ ունիմ, ձեռաց գնամ ու գամ։

Նա գնաց. Գաւրիլան չորս կողմը նալեցաւ։ Պանդոկը ներքնատան մէջ էր. ներսը խոնաւ էր, մութ, ու արաղի, ծխախոտի մուխի, ձիւթի և մի ուրիշ սուրբանի յեղձուցիչ հոտով լցուած։ Նրա հանդէպ, ուրիշ

սեղանի առաջ նստած էր շէկ մօրուքով, ածխի փոշու ու ձիւթի մէջ կորած մի հարբած մարդ, որ նաւաստիի շոր ունէր հագին: Նա, շուտ-շուտ ծկլթալով մի երդ էր գրգռում, որը, մերժ շաչելով և մերժ կոկորդալին, ամբողջապէս հատ ընդ հատ ու կտրտած խօսքերից էր բաղկացած: Պարզ էր, որ դա ուսւ չէր:

Նրա ետևը նստած էին երկու գջլտած, սևամազ, տրւակէզ մոլդավան կանալք և նոյնոլէս հարբած ձայնով մի բան ճրճռում:

Ապա մթնում երեւացին դարձեալ ուրիշ կերպարանքներ, ամենքն էլ տարօրինակ գզգզուած, ամենքն էլ կէս հարբած, կանչվոտան, անխաղաղ....

Դաւրիլալի սիրտը ճաքում էր մենակ: Ուզում էր, որ աղէն շուտով գայ: Իսկ պանդոկի մէջ աղմուկը միախառնում էր և թ: ում, թէ ալդ մի ահագին կենդանի է բառաչում: Ալդ կենդանին հարիւրաւոր տարբեր ձայններ ունէր, զալրագնած, կոյր զկուրախն կտրտում էր որ այս քարե փոսից դուրս պըճնի, բայց ելք չէր գտնում ազատուելու....: Դաւրիլան զգում էր, թէ ինչ-պէս մի հարբեցնող ու ծանր բանով լագեցնում է իւր մարմինը, որից գլուխն էր պտոյտ գալիս ու մթնում աչքերը, որոնք հետաքրքրութեամբ ու վախով խորոմոլոր էին անում պանդոկի մէջ....:

Զելկաշն եկաւ և նրանք զրոյց անելով սկսան ուտել, խմել: Երբորդ բաժակի վրայ Դաւրիլան քէֆովցաւ: Նա զուտարթացաւ և ուզում էր մի հաճելի բան ասել տղին, որը - երեելի մարդ — առանց մի բան նկատելու, այսպէս համով ճաշ էր ուտեցըրել նրան: Բայց բառերը, որ տղիքի նման կուտակուել էին նրա կրկորդի մէջ, չղիտես ինչու չէին պոկ գալիս լեզուի ծալրից, որ լանկարծ ծանրացել, չէր շարժւում:

Զելկաշը նայում էր նրան ու, հեգնօրէն ժպտալով, ասում.

— Բանդ պրծաւ...: Ե՛ւհ, խոխալ... հինգ բաժան-կով... բաս ո՞նց ես աշխատելու:

— Ախափիր,— թոթովում էր Գաւրիլան: — Մի վախի: Ամօթով չեմ մնալ... ալսինքն այ...: Արի մի քեզ պաշեմ... հը...:

— Լաւ, լաւ...: Ա՛ռ, մէկ էլ կոնծի:

Գաւրիլան խմում էր ու վերջապէս այն տեղը հա-սաւ, որ ամեն բան սկսաւ նրա աչքի առաջ հաւասարա-պէս, ալիքանման շորորալ: Սա դիւրական չէր և դրա-նից նրա սիրտն էր խառնում: Նրա դէմքը ապուշ-ողե-ւորուած արտայայտութիւն ստացաւ: Ուզում էր բան ասել, բայց ծիծաղելի կերալով միայն շրթունքներն էր ծփփացնում ու բառաջում: Զելկաշը, աչքը նրան լտ-ռած, նայում էր, կարծես մի բան էր մտաբերում, ո-լորում էր բեխերն ու շարունակ, այժմ արդէն մռալլ ու չար կերպարանքով, ժպտում:

Իսկ պանդոկը մռնչում էր հարբած աղմուկ բար-ձրացրած: Եւկ նաւաստին, սեղանին լենած, քնել էր:

— Դէ վեր, գնանք,— ասաց Զելկաշը վեր կենալով:

Գաւրիլան ուզում էր տեղիցը վեր կենալ, բայց չկարողացաւ և, ալինդ ուշունց տալով, հարբած մար-դու անմիտ ծիծաղով ծիծաղեցաւ:

— Բանդ փթռուկ է, — ասաց Զելկաշը նորից նրա գէմը, աթոռի վրայ նստելով:

Գաւրիլան, բութ աչքերը աղին ձգած, շարունակ ծիծաղում էր: Իսկ աղէն աչքերը սենեռած, ուշաղիր ու մտախոհ նալում էր նրան: Նա իւր առաջ տեսնում էր մի մարդ, որի կեանքը իւր, գալլի ճիրանն էր ըն-կել: Նա, Զելկաշն զգում էր, որ իւր ձեռքն էր ալժմս ալդ կեանքը և որ կողմ ուզենար կարող էր ծուել: Նա կարող էր փշրել ալդ կետնքը, բայց կարող էր նաև գիւղական կանոնաւոր շրջանակի մէջ գնել: Զելկաշն ի-րեն տէր զգալով ուրիշի վրայ, զուարճանում էր և միտք

անում, թէ երբէք ալս երիտասարդը խմելու չէ ալն քաժակը, որ ճակատագիրը խմացրել էր իրեն, Զեղկաշին.... Եւ նա նախանձում ու ցաւում էր ալս նորաբողբոջ կեանքի վրայ, ծիծաղում էր վրան և մինչև անգամ վշտանում մտածելով, թէ դա դարձեալ կարող է իրա նման մի ուրիշի ճանկն էլ ընկնել.... Եւ վերջ ի վերջոյ ալս բոլոր զգացմունքները միախառնուեցան Զեղկաշի մէջ ու մի տեսակ հալրական և տիրական զգացմունք դարձան: Երիտասարդը նրա ափսոսն էր գալիս, բայց և իրանց պէտքն էր նա: Այն ժամանակ Զեղկաշը մտաւ Գաւրիլալի թեր և, քամակից ծունկովը թեթեակի հըհըելով, պանդոկի բակը հանեց, փալտի ստուերում պառկեցրեց, իսկ ինքը նստաւ շեղի մօտն ու սկսաւ չիբուխ քաշել: Գաւրիլան փոքր ինչ շուռ ու մուռ եկաւ, մըթմըթաց ու քնեց:

II

— Հը՝ պատրամատ է, — ցած ձալնով հարցրեց Զեղկաշը Գաւրիլալին, որ թիերի հետ էր:

— Էս ըոպէիս: Թին լաւ չի ամրանում, կողքի ցըցերը շարժւում են: Կարելի՞ է թիով խփեմ, ամբացնեմ:

— Զէ-չէ: Զէն չդուրս գալ: Զեռքով պինդ հուպտուր, տեղը կընկնի:

Նրանք երկուսով սուս ու փուս կարգի էին ձգում իրենց մակոյկը, որ կապած էր մի նաւի քամակին: Այդտեղ մի ահագին նաւատորմիղ էր. կալին բազմաթիւ առագաստանաւեր, որոնք կազնի փալտ էին բարձած, և թրքական մեծ նաւեր, որոնք կիսով չափ դատարկած, բայց կիսով չափ էլ զեռ արմաւենի, սանդալ և նոճու հաստ կոճղեր էին բարձած:

Առլթ գիշեր էր, երկնքի երեսին շարժւում էին

փրչոտ ամպակոյտերի հաստ շերտերը. Ծովը հանդարտէր, ու ու ձէթի պէս թանձր: Նա աղի խոնաւ բոյք էր արձակում և նաւերի կողերին, ափերին խփուելով քնքոյշ մրմնջում ու թեթեակի շարժում նաւակը: Ա-փից շատ հեռու, ծովի միջից բարձրանում էին նաւե-րի սև կմախքը՝ երկնքի մէջ ցցած բիզբիզ կայմերով, որոնց գագաթին գոյն-գոյն լապտերներ էին կախած: Ծովին անդրադարձնում էր լապտերների լուսը. անթիւ դեղին բծեր սփռուած էին նրա վրայ: Դրանք շատ սի-րուն գողդողում էին նրա համաշափ, և հզօրէն ուռ-չող փափուկ, կաթնասև, թաւշեալ կրծքի վրայ: Ծովը քնած էր օրուալ աշխատանքից խոնջացած մշակի առողջ, խոր քնով:

— Գնանք, — ասաց Գաւրիլան թիերը ծովին իջեց-նելով:

— Պատրաստ է: — Զելկաշը զեկի մի զօրեղ հարուա-ծով մակուկը ձգեց նաւերի միջև եղած ջրի շերտի վը-րայ: Մակուկը արագութեամբ անցաւ սահուն ջրի վրայով, և ջուրը թիերի բաղիսիւնից կապտաւուն, Փոսֆորային լուսով փայլեց: Այդ փայլը, երկար ժապաւէնի նման, մեղմ լուսով, ոլորտում էր զեկի ետևից:

— Հը. ո՞նց է գլուխդ. յաւնմ է, — քնքութեամբ հարցրեց Զելկաշը:

— Ել մի սսա... տրաքւում է...: Ես ըստէիս մի-քիչ ջուր անեմ, թրջեմ:

— Ինչի՞: Լաւն էն, վեր առ, ներսդ թրջիր, բալ-քի աւելի շուշ անցնի, — և նա շիշը Գաւրիլալին եր-կարացրեց:

— Հա: Տէր ողորմեա...

Թոլլ կլթկլթոց լսուեց:

— Ի՞նչ է, ուրախացար հո... հերիք է, — կանգնտ-ցրեց նրան Զելկաշը:

Մակուկն, անձալն ու ճարպիկութեամբ նաւերի-

միջև, պտուտներ անելով, նորից սլացաւ...։ Յանկարծ նա դուրս պրձաւ դրանց բազմութեան միջից, և նրանց առաջ բացուեց անսահման հզօր, փայլուն ծովը, որ գնում, կորչում էր կապուտակ տարածութեան մէջ, որտեղից դէպի երկինք էին ռարձրանում լեռնացած ամպերը—դեղին բմբուլէ երիզը շուրթերին մանիշակակապոյտ ամպեր, տլլ և կանաչաւուն, ծովի ջրի գոյնի, և այն տաղտկալի տրճճագոյն ամպերը, որոնք մարդուսմիտքն ու հոգին ճնշող թախծալի, ծանր ստուերներ են արձակում, նրանք դանդաղդանդաղ իրար վրալ էին բարձրանում և, մերթ միանալով, մերթ միմեանց սուաջկտրուկ անելով, իրար էին խառնում իրենց գոյներըն ու ձեւերը, և իրենք իրենց կուլ գնում ու նորից կազմում նորանոր, վեհ և մոռալ ձեւերով...։ Եւ միօրհասական բան կար այն տնշունչ կոլտերի դանդաղ շարժման մէջ։ Թւում էր, թէ այնտեղ, ծովի ծալըին անչափ շատ է դրանց տեղը և թէ նրանք պէտք է միշտ ալդպէս անտարբեր կերպով բարձրանան երկինքը բութ չար նպատակ ունենալով թոյլ չտալու որ քնչտծծովի վրալ երբէք երկինքը չփալի իւր միլիօնաւոր ոսկէ աչքերով—գոյնզգոյն աստղերով, որոնց կենդանի և անրջալին ցոլքը վեհ ցանկութիւններ են գրգում մարդկանց մէջ, որոնց սուրբ և մաքուր փալը շատ թանկ է մարդկանց համար։

—Լաւ չի ծովը, —հարցրեց Զեղկաշը։

—Վաս չի։ Մենակ վախ բան է, —պատասխանեց Գաւրիլան թիերով համաշխափ և ուժով ջուրը բաղմելով։ Զուըր հազիւ լսելի կերպով հնչում էր ու երկալն թիերի հարուածից ճխփում, ճխփում էր ու ամբողջապէս փալում այդ Փոսֆորալին կապոյտ ջերմ լուսով։

—Վախ է։ Ա՛լ ախմախ...՝ ծաղրելով ասաց Զեղկաշը։

Նա, ալդ գողն ու ցինիկը, սիրում էր ծովը։ Նրա

եռուն, նեարդալին բնաւորութիւնը, ծարաւի տպաւութեանց, երբէք յագուրդ չէր ստանում դիտելով այս անսահման, ազատ և հզօր մութ տարածութիւնը: Եւ նրա համար վիրաւորանք էր մի այդպիսի պատասխան լսել իւր հարցին այն բանի մասին, որ ինքը սիրում էր: Նեկի մօտ նստած, նտ իւր թիով ճեղքում էր ջուրը, և այս թաւշեալ հարթութեան վրայ երկար ու հեռու գնալու փափագով լի՛ խաղաղ նայում էր առաջը:

Ծովի վրայ լինելիս նրա մէջ ծնւում էր մի լալն, ջերմ զգացմունք, որ գլխովին համակելով նրա հոգին, նրան փոքր ինչ մաքրում էր կեանքի ապականութիւնից: Նա գնահատում էր ալգ և սիրում էր իրեն մաքրուած տեսնել այստեղ, ջրի և օդի միջև, ուր կեանքի խոհերն ու ինքը կեանքը միշտ կորցնում են՝ առաջինը — սուր բնաւորութիւնը, երկրորդը՝ արժէքը: Գիշերները ծովի երեսին մեղմ սահում է նրա քնէած շնչառութեան քնքոլց շշուկը. այդ անընթելի հունչը խաղաղութիւն է զեղում մարդուս հոգու մէջ և, շողոմաբար զսպելով նրա չար ձգտումները, զօրեղ ցնորքներ է ծնում նրա մէջ...:

— Բաս սարքն ուր է: Հէ, — լանկարծ հարցը եց Գաւրիլան չորս կողմը նայելով:

Զելկաշը ցնցուեց:

— Սարքը: Նաւակի խելումն է:

— Եդ ինչ սարք է, — նորից կասկածանքով հարց լեց Գաւրիլան:

— Ի՞նչ պիտի լինի...

Բայց Զելկաշն ամաչում էր իւր խսկական միտքը թաքցնելով այս երեխի առաջ սուտ ասի, և նրա ափսոսն էին գալիս իւր խոհերն ու զգացմունքները, որ այս տղան իւր հարցմունքով ոչնչացրել էր: Նա բարկացաւ: Նրան ծանօթ էրեցքը, որ զգում էր կրծքում ու կոկորդում, գրգուեց նրան և նա ազդու և չոր-չոր ասաց.

—Գիտես ինչ կալ, դու նստում՝ ես նստի տեղու։
Քեզ չվերաբերող բանի մէջ մի խառնուի։ Քեզ բռնել եմ
թի քաշես—դէ, թի էլ քաշի։ Թէ ուր չանա ես թա-
կելու — փիս կլինի։ Հասկացացր։ . . .

Մի ըոսէ մակոյկը ցնցուեց ու կանգ առաւ։ Թիե-
րը ջուրը վրփրացնելով մնացին ջրի մէջ, և Գաւրիլան
անհանգստացած սկսաւ նստած տեղը տրոր-տրոր գալ։

—Շարժիր։

Թունդ հալհոլանքը օդը շարժեց։ Գաւրիլան թիե-
րը շարժեց։ Մակոյկն ասես թէ վախեցաւ և, ջուրն աղ-
մկալից ճեղքելով, արագ, նեարդալին ցնցումներով ա-
ռաջ գնաց։

—Մէկ չափի . . .

Զելկաշը, առանց թին ձեռքից բաց թողնելու և
իւր սառն աչքերը Գաւրիլալի սպրդնած, դողդողացող
շրթունքներով դէմքին մեխած, վեր կացաւ, կանգնեց
տեղից։ Մէջքը ծռած, դէսի առաջ խոնարհած, նմանել
էր կատուի, որ պատրաստ է թռիչք անելու։

Լսելի էր ատամների չարացած կրճառոց ու մի ինչ
որ սոկորների թոյլ չըխկոց։

—Ո՞վ է կանչում, —լսուեցաւ ծովից մի դաժան
ձալն։

—Դէ, շարժի մի քիչ, իժի ծնունդ . . . կամաց թիե-
րի ձայնը . . . կսպանեմ էս շանը . . . Դէ, շարժի . . . Մէկ,
երկու։ Հապաւ։ Մի ձալն հանի . . . և' կջարդեմ, — թըշ-
շում էր Զելկաշը։

—Աստուածածին . . . Մարիամ, — շշնչում էր Գաւրի-
լան վախից և ուժով աշխատելուց թուլացած ու դողդո-
ղալով։

Մակոյկը սահուն կերպով շուռ եկաւ ու սկսաւ
գնալ նաւահանգստի կողմը, ուր լապտերների լոյսերը
միաւորուած, բազմագոյն խումբ էին կազմել և երե-
ւում էին կալմերի սիւները։

— Հէր: Եդ ով է գոռում,—լսուեց նորից:
Ալժմ ձայնը աւելի հեռուից էր գալիս, քան թէ
առաջին անգամ: Զելկաշը հանգստացաւ:

— Բարեկամ, դու ինքդ ես գոռացողը.—ասաց նա
դէպի ձայների կողմը, ապա դարձաւ դէպի Գաւրիլան,
որ գեռ աղօթք էր փսխում.—Դէ, ախալեր, քու բազդդ
էր: Թէ որ Եդ գեւերն ետևներից ընկնէին—պրծել
էր: Հասկանո՞ւմ ես: Ես քեզ իսկոյն... ձկների կուշտը....

Ալժմ, երբ որ Զելկաշն արդէն հանգիստ ու մինչեւ
անգամ բարեհոգի եղանակով էր խօսում, Գաւրիլան,
որ վախիցը գեռ գողդողում էր, աղաշեց.

—Եկ դու ինձ բաց թող: Աստուծու սիրուն լինի,
բաց թող: Որտեղ ուզում է լինի, ինձ ափ հանի: Վալ-
վալ-վալ....: Հոգովմարմնով կորայ:...: Դէ, արի դու
Աստուծդ միտդ բեր, ինձ բաց թող: Ես բնչ եմ ա-
րել քեզ: Ես բանը չեմ կարող....: Կեանքումս էսպիսի
բաների մէջ չեմ եղել....: Առաջին անգամն է....: Տէր
Աստուծ: Հոգիս պիտի կորցնեմ: Այս ոնց ինձ խարե-
ցիր, ախալեր. հը: Մեղք է հոգուդ....: Զէ հոգիդ կոր-
ցնում ես....: Ա՛յ քեզ բան....:

— Ի նչ բան,—խստութեամբ հարցըց Զելկաշը:—
Հը: Դէ, ասա, բնչ բան:

Նրիտասարդի վախը նրան զուարճացնում էր, և
նա հրճում էր թէ Գաւրիլալի վախովը և թէ այս
քանովս թէ—տես, ինչ հուժկու մարդ է Զելկաշը:

— Մուլթ բաներ են, ախալեր....: Աստծու խաթ-
քին, ինձ բաց թող....: Եւ բնչ եմ արել քեզ... հը....:
Հոգի-ջան....

— Հերիք է, լոի: Որ հարկաւոր չլինէիր, չէի էլ
վերցնի: Հասկացար.—դէ, լոի:

— Ա՛յ Աստուծ, —լաց լինելով հառաչեց Գաւրիլան:
— Դէ, դէ... գլխիս լաց լինող պէտք չէ, —ընդ-
հատեց նրան Զելկաշը.

Բայց Գաւրիլան ալժմ արդէն չէր կարողանում
իրեն զսպել և, կամաց հեկեկալով, լաց էր լինում,
քիթը սրբում, նստարանի վրայ նստած տեղը շարժ-
ում, բայց և ուժով, յուսահատաբար թիավարում։
Մակոյկը սլաքի նման թռչում էր։ Ճանապարհին դար-
ձեալ դիմացները ելան նաւերի կոլտեր, և մակոյկը,
նաւերի արանքում ջրի նեղ շերտերի վրայ տանտիւլի-
կի պէս պտոյտ-պտոյտ անելով, նորից կորաւ նրանց
միջև։

— Հէր, դու, լսիր։ Որ քեզ բան հարցնող լինի —
տես, թէ որ ուզում ես սաղ մնալ, սկի բան չասես։
Հասկացմը։

— Ե՞հի... — յուսահատ հառաչեց Գաւրիլան ի պա-
տասխան խիստ պտուէրին և դառնութեամբ աւելաց-
րեց. — իմ բանս պըճած է...»

— Մի ոռնա, — խստութեամբ շշնչաց Զելկաշը։

Գաւրիլան ալդ շշունչի վրայ բոլորովին կորցրեց
որևէ բան մտածելու ընդունակութիւնը և, վասնգի
սառն նախազգացումով բռնուած, մեռածի նման էր։
Նա մեքենաբար թիերն իջեցնում էր ջրի մէջ, յետ
կուանում, հանում էր ջրից, նորից իջեցնում և սաղ
ժամանակը իւր տրեխներին նայում։

Ալիքների քնամած մըմունջը մռալլ դօղանջում
էր, և մարդու վրայ սարսափ ձգում։ Ահաւասիկ նաւա-
հանգիստը...։ Նրա գրանիտեալ պատի միւս կողմը
լսւում էին մարդկանց ձախներ, ջրի ճղփիւնը, երգ,
քարակ սուլոց։

— Կաց, — շշնչաց Զելկաշը. — Բաց թող թիերը։ Զեռ-
ներդ պատին դէմ տուրի կամաց, անպիտան...։

Գաւրիլան ձեռները սահուն քարերին դէմ տալով
մակոյկը պատի երկարութեամբ առաջ տարաւ։ Մակոյկը
քարի վրայ բուսած լորձին քսուելով անձախ առաջ էր
գնում։

—Կանգնի...: Թիերն ինձ տուր. էստեղ տուր. Գլխազբիրդ որտեղ է. պարկումդ է: Պարկդ ինձ տուր. Դէհ, շուտ արա, տուր: Ես, ախալէր ջան, նրա համար եմ առնում, որ չփախչես...: Ել հիմի չես փախչի: Ա. ունց թիերի գուցէ ճար անէիր, փախչէիր, բայց առանց գլխազըրի կվախես: Սպասիր էստեղ: Բայց որ ձէն ես հանել, է, տես—ծովի տակ կդանես ինքդ քեզ...:

Եւ յանկարծ ձեռներով մի բանից բռնած Զելկաշըն օդի մէջ բարձրացաւ և պատի վրայ անհետացաւ:

Գաւըիլան ցնցուեցաւ...: Այս բանս խիստ արագ եղաւ: Նա զգում էր, թէ ինչպէս վրայից կամաց-կամաց վերանում է այն անիծուած ծանրութիւնն ու վախը, որ զգում էր այդ թաւաբեխ լղար գողի ներկայութեանը...: Պէտք էր փախչել...: Եւ նա, ազատ շունչ քաշելով, չորս կողմը նալեցաւ: Չախ կողմը բարձրացած էր կալմերից զուրկ մի նաւի սև կմախք, մի ահագին դագաղ՝ մարդազուրկ ու դատարկ...: Նաւի կողերին հասցրած ալիքների ամեն մի բաղխումը խուլ, հնչական արձագանք էր առաջացնում, որ ծանր հառածի էր նմանում: Աջ կողմում ջրի վրայով սառն ու ծանր օձի նման ձգուած էր ալիսակալի քարէ խոնաւ պատը: Ետևումն էլ երեսում էին ինչ որ սև նաւակը-մախքներ, իսկ առաջը, պատի ու այդ դագաղի միջև, երեսում էր լուռ, անապատացած ծովը, որի վրայ սև ամպեր էին կախ ընկել: Եւ դրանք, ահագին ու ծանր, դանդաղելով շարժւում էին և խաւարից արձակում իրանց սարսափը, պատրաստ իրենց ծանրութեամբ ջընջ-խելու մարդուաւ: Ամեն ինչ սառն էր, սև, չարագուշակ: Սարսափը պատեց Գաւըիլալին: Այս սարսափն աւելի վատ էր, քան Զելկաշի ազդածը. դա պինդ գըրկեց Գաւըիլալի կուրծքը, վեհերկոտ մի կոշտ դարձեց ու մեխեց մակոլի նստարանին...:

Իսկ շուրջն ամեն ինչ լուռ էր: Բացի ծովի հա-

ռազմից ոչ մի ձայն. և թւում էր, թէ հէնց այն է որ
ալդ լուստիւնը պիտի պալթէր մի տեսակ զարհուրելի,
կատաղի - բարձրագուշ կերպով, մի ալնպիսի ձեռվ, որ
ամբողջ ծովը մինչև լատակը պիտի դղրդացնէր և ծո-
վալին անտպատի մէջ շաղ տար այս բոլոր սև նաւերը:
Խնչպէս առաջ, այժմ էլ ամպակուտերը դանդաղ ու
տաղտկալի ստհում էին երկնքի երեսին, բայց ծովից
աւելի և աւելի բազմութեամբ էին բարձրանում դը-
րանք և, երկնքին նայելով, կարելի էր կարծել, թէ
դա էլ ծով է, բայց միւս քնած, խաղողու հարթ ծովի
վրայ շուռ ընկած խոռվալուզ ծով: Ամպերը նման էին
գէպի երկիրս դիմու ալիքների՝ որոնց ալւոր գանգուր
կատարները ցած էին ուղղած, վհերի՝ որոնցից քամին
պոկել, դուրս էր հանել ալդ ալիքները, և նոր-նոր
կազմուող ծուփերի, որանք գեռ կատաղութեան և զալ-
րոյթի կանաչաւուն փրփուրով չեն ծածկուած:

Գաւրիլան իրեն բոլորովին ճնշուած էր զգում այս
մռայլ խաղաղութեամբ ու գեղով, նա զգում էր, որ
ուզում է իւր աղալին շուտով տեսնել: Հապա եթէ ա-
ղան ալնտեղ մնալ...: Փամանակը շատ ծանը էր անց-
նում, աւելի ծանը, քան երկնքի ամպերն էին շարժ-
ուում...: Եւ ժամանակ առ ժամանակ լուստիւնն աւե-
լի չարագուշակ էր դառնում...: Բայց ահա ալիսակալի-
եաւել լսուեց ճղփիւն, խշաց ու շշուկի պէս մի բան
Գաւրիլալին թւում էր, թէ էն է, պիտի մեռնի...:

—Նէր, Քնած ես: Բռնիր... զգուշ..., —լսուեց Զել-
կաշի խուլ ձայնը:

Պատի վրայից մի ծանը ու խորանարդ բան էր
ցած գալիս: Գաւրիլան ալդ բանը մակոյկի մէջ առաւ:
Ալդպիսի մէկ հատ էլ իջաւ: Այնուհետեւ պատի լայն-
քով ձգուեց Զելկաշի երկար կերպարանքը, չգիտես ո՞ր-
տեղից դուրս եկան թիերը, Գաւրիլալի ոտքերի մօտ

ընկաւ նրա տոպղբակը, և Զելիաշը, ծանր-ծանր շունչ
տռնելով նստաւ զեկի մօտ:

Գաւրիլան նրան նայելով ուրախ ու վեհերկատ
ժպում էր:

— Յոդնեցար, — հարցրեց նա:

— Առանց դրան կլինի, հորդուկ: Դէ, հապա
թիերին մի լաւ ոյժ տուր...: Լաւ օգուտ ունեցար,
ախսեր ջան: Բանի կէսն արել ենք: Այժմ ալէտք է
դների աչքի տակովն անց կենալ, իսկ լետոյ փողդ
ստացիր ու գնա քու Մաշկայիդ կուշտը: Դու Մաշկա
ունիս: Հէ, տղար:

— Զէ-է: — Գաւրիլան բոլոր ոյժը թափում էր և
աշխատում կրծքով, որպէս փուքս, և ձեռներով — որ.
պէս պողպատեալ զապանակ: Զուրը մակուկի տակ քըլ-
քըլում էր, և զեկի ետևից ընկած կապուտ զերան այժմ
աւելի լախն էր: Գաւրիլան մի անգամից քրտնքակոլ էր
եղել, բայց դարձեալ շարունակում էր բոլոր ուժովը
թիավարել: Սլս գիշեր երկու անգամ սաստիկ ահի մէջ
լինելով, վախենում էր թէ երրորդ անգամն էլ լինի,
և նա մի բան էր միայն ցանկանում — շուտ վերջացնել
այս անիծուած աշխատանքը, ցամաք գուրս գալ ու
փախչել այս մարդուց, քանի դեռ նա իրեն իսկապէս
չէ սպանել կամ բանդ ընկնելու պատճառ չի եղել: Նա
վճռեց ոչ մի բանի վրա չխօսել հետը, ամենաին չընդ-
դիմանալ, ինչ որ հրամալէ՝ ամեն բան անել, և, եթէ
յաջողուի սաղուալաթ ազատուել, հէնց վաղն ևեթ
նիկողալոս Հրաշագործի համար պատարագ անել տալ...:
Նրա կրծքից ուզում էր դուրս պլճնի ջերմ աղօթ-
քը...: Բայց նա իրեն բռնում էր, շոգեմեքենալի նման
հեռմ և, աչքի տակովը Զելիաշին նայելով, լուռ մը-
նում:

Իսկ Զելիաշը չոր-չոր, երկար հասակով, դէպի ա-
ռաջ ծռուած, թռչել-գնալու պատրաստ թռչունի նը-

ման, իւր բազէի սուը աչքերով նալում էր մակոյկի առջեց խաւարի մէջ և, իւր գիշատիչ, սապատաւով քիթը դէս ու դէն անելով, մի ձեռքով պինդ բռնած էր զեկի կոթը, իսկ միւսով քաշը ում էր բեխը, որը ցընցում էր ժպիտներից, որոնք շարունակ ծռմռում էին նրա շրթունքները։ Զելիալը գոհ էր իւր աջողութիւնից, գոհ էր իրենից և այս երիտասարդից, որը իրենից սաստիկ վախեցել իւր ստրուկն էր դարձել։ Նա այժմուանից արդէն բերկրանք էր զգում վաղեան մեծ քէֆի համար, իսկ այժմ զուարճանում էր իւր ոլժով և որ կարողացել էր ստրկացնել այդ ջահէլ, թարմ երիտասարդին։ Նա դիտում էր, թէ ինչպէս սա աշխատում էր, և խեղճ տղան նրա ափսոսն եկաւ, ու կամեցաւ նրան սիրտ տալ։

— Հէլ, — ցած ձախով խօսեց նա քմծիծաղ տալով։
— Նատ վախեցար, հը։

— Ո...չինչ..., — հոգոց հանեց Գաւրիլան ու կոկորդը մաքրեց։

— Ել հմի թիերին շատ զօր մի տար։ Պրծանք։ Մենակ մի տեղ մնաց, էն էլ որ անցանք...։ Հանգըստացի։

Գաւրիլան հլութեամբ հնազանդեցաւ, շաբկի թեւով երեսի քրտինքը սրբեց և թիերը նորից ջրի մէջ ժողեց։

— Դէ, թիերը կամացուկ շարժի։ Տես ջուրը ձէն չհանի։ Պէտք է մի դարպասից էլ փախչենք։ Կամաց, կամաց...։ Թէ չէ, ախպեր ջան, էստեղ մարդիկ շատ ժունդ են։ Ճակատիդ էնպէս կտրաքացնեն, որ սկի ձէնըդ չդուրս գալ։

Այժմ արդէն մակոյկը ջրի վրալով գողէգող, բոլորովին անձալն էր առաջ գնում։ Միայն թիերից ծովի մէջ թափւում էին կապտագոյն կաթիներ և նրանց կաթած տեղում նոյնպէս կապտաւուն բծեր էին առա.

ջանում։ Գիշերը քանի գնում աւելի ու աւելի լուռ և խաւար էր դառնում։ Այժմ արդէն երկինքն ալեծուվի ծովի չէր նմանում — մութ-մութ ամպերը, անշարժ ու ներքև կախ ընկած փոռւել էին երկնքի երեսին և համահաւասար, ծանր վարագոլրի նման ծածկել նրան։ Իսկ ծովն աւելի էր խաղաղել, սևացել ու աւելի զօրեղ կերպով՝ էր բուրում ջերմ, աղի հոտը և ալլ ևս առաջուալ նման այնքան լայն չէր թւում։

— Ախ, ինչ լաւ կլինէր, որ անձրեւ գար, — շշնջաց Զելկաշը։ — Ենպէս կանցնէինք, ոնց որ փայտի քամակում լինէինք։

Մակոյկից աջ ու ձախ սև ջրի միջից ցցուեցան ինչ որ նաւազէնքեր՝ անշարժ, մռալլ ու նոյնալէս սև։ Դրանցից մէկի վրայ շարժւում էր մի լոլս, մէկը լապտերը ձեռին ման էր գալիս։ Ծովը, նրանց կողերը շոյելով, աղերսալի ու խուլ ձայն էր հանում, իսկ գրանք էլ գրգռալի ու սառը արձագանք տալով, կարծես վիճում էին հետը և չէին ուզում մի ինչ որ բան զիջել նրան։

— Պահապանները..., — հազիւ լսելի ձայնով ասաց Զելկաշը։

Այն բոպէից, որ նա պատուիրել էր թիերը կամաց շարժել, սուր սպասողական գրութիւնը նորից պաշարել էր Գաւըիլալին։ Նա ամբողջապէս առաջ, խաւարի մէջ էր մեկնուել, և նրան թւում էր, թէ իւր մարմինը մեծանում է, — ոսկրներն ու չղերը բութ ցաւ պատճառելով ձգւում, երկարում էին, գլուխը, միմիալն մի մտքով պաշարուած, ցաւում էր, մէջքի մորթը ցընցւում, իսկ ոտքերին մանր, սուր և սառն ասեղներ էին ցցւում։ Լարուած ուշադրութեամբ խաւարի մէջ նալելուց նրա աչքերը պէծպծին էին տալիս, և նա ըոպէ առ ըոպէ սպասում էր, թէ հէնց էն է մի բան գուրս կգայ և կգոռալ նրանց, «կացէք, գողեր»։

Եւ ալժմ, երբ Զելկաշը շշնջաց «պահապանները», Դաւրիլան ցնցուեց՝—սուր, կիզող միտքն անցաւ նրա միջով, անցաւ ու բաղխեց նրա պինդ լարուած ջղերին, —նա ուղում էր գոռալ, օգնութեան կանչել... Նա արդէն բաց էր արել բերանը, տեղիցը մի քիչ վեր կացել, կուրծքը ուղցրել, օդ հաւաքել, բերանը բացել... բայց լանկարծ, սարսափահար եղած, հէնց գիտենաս մարտկահար եղած, աչքերը փակեց ու նստարանից ցած գլորուեցաւ:

... Մակոյկի դիմացը, հեռաւոր հորիզոնի վրայ ծովի սև ջրի միջից գուրս եկաւ մի ահագին հրա-կապոյտ սուր, գուրս եկաւ, ճեղքեց գիշերուալ խաւարը, իւր սուր բերանով սահեց, անցաւ երկնքի ամպերի վը-քայից և լայն կապոյտ շերտ կազմած փռուեցաւ ծովի երեսին: Փռուեցաւ, և նրա փալլուն շերտի վրայ խաւարի միջից գուրս եկան մինչ ալդ անտեսանելի մնացած սև, լուռ, գիշերալին փառահեղ մառախուղով պատած նաւեր: Թւում էր, թէ զրանք երկար ժամանակ մնացել էին ծովի լատակում, ուր փոթորկի հզօր ուժն էր մղած, և ահա ալժմս, ծովի ծնունդ հրեղէն սուրի հրամանով,—գուրս եկան լատակից, որպէս զի գիտեն երկինքն ու ալն ամենը, որ ջրի երեսին էր գտնում...: Նաւերի թուկերը բռնել էին կալմերի չորս բոլորքը՝ նման կպչուն ջրախոտերի, որոնք ալս սև հսկաների հետ միասին ծովի լատակից գուրս գալով, իրենց ցանցով խճճել էին նրանց: Եւ դա, ալդ կապոյտ սուրը, ծովի երեսից նորից բարձրացաւ դէպի երկինք, փալլատակելով բարձրացաւ, նորից ճեղքեց գիշերը և նորից փռուեցաւ արդէն մի ուրիշ ուղղութեամբ: Եւ դարձեալ այնտեղ, որտեղ փռուեցաւ, խաւարի միջից գուրս սողացին նաւերի կմաղքները, որ մինչ ալդ անտեսանելի էին մնում:

Զելկաշի մակոյկը կանգ առաւ և, կարծես տատա-

մսած, օրօրւում էր ջրի երեսին: Գաւըլիան, ձեռներով
երեսը ծածկած, պառկած էր լատակին, իսկ Զելիաշը
թիով բոթում էր նրան և կատաղաբար, բայց ցած ձայ-
նով տշշում:

— Յիմար, այդ մտքսատան շըջիկ նաւն է...: Այս
էլէքտրական լապտեր է...: Աեր կաց, ախմախ: Էս ըռ-
պէիս մեր վրէն էլ լուսը կքցեն...: Աւանակ, ինձ էլ
կկորցնես, ինքդ էլ կկորչես: Դէ...:

Եւ վերջապէս, թիակի սուր ծալրի հարուածներից
մէկը միւսներից աւելի ուժով իջաւ Գուրըլալի մէջքին,
նա վեր թռաւ, աչքերը բաց անելու սիրոտ չունենալով,
նստեց նստարանի վրայ և, խարխափելով թիերը գտաւ
ու մակոյին առաջ շարժեց:

— Կամաց: Զէ կսպանեմ: Դէ, կամաց...: Այ քեզ
լիմար, գրողը տանի քեզ...: Ի՞նչ էիր վախենում: Հը:
ալլանդակ...: Լապտեր ու հայելի է — ուրիշ ոչինչ:
Թիերդ կամաց... թթուած մոռթ...: Հայելին դէս-դէն-
են շարժում ու ծովը լուսաւորացնում, որ տեսնեն —
թէ ինձ և քեզ նմաններ չկան ծովի վրայ: Մտիկ են
տալիս, որ ապրանք չփախցնեն: Մի վախի, տղալ, լոյ-
սը մեզ չի հասնի: Այժմ մենք... — Զելիաշը լաղթա-
կան կերպով չորս բոլորքը նայեցաւ: — Պըճաւ, դուրս
եկանք...: Թիւհ...: Շատ բաղդաւոր ես էլել, այ ախ-
մախ...:

Գաւըլիան լուռ էր, թիավարում էր ու, ծանր
շունչ քաշելով, ծուռ-ծուռ նալում ալն կողմը, ուր
շարունակ բարձրանում ու իջնում էր այդ հըեղէն
սուրը: Նա ամենեկին չէր կարողանում հաւատալ, որ
դա լուսամփոփաւոր լապտեր է: Կապտագոյն սառը
լուսը, որ խաւարը կտրատելով ծովին արծաթի գոյն էր
տալիս, մի անբացատրելի բան ունէր իւր մէջ, և Գաւ-
ըլիան դարձեալ սրտամաշ վախի մէջ ընկաւ: Եւ դար-
ձեալ նախազգացումը ճնշում էր նրա կուրծքը: Նա-

թիավարում էր մեքենաբար և շարունակ կռւչ գալիս, ասես թէ վերևից հարուածի էր սպասում, և ոչինչ, ոչ մի ցանկութիւն չկար այլ ևս նրա մէջ—նա դատարկ էր և հոգուց զուրկ: Այս գիշերուալ յուզումներն ամեն մարդկալին ինչ կըծել, վերջացրել էին նրա միջից:

Իսկ ԶԵՂԿԱՇը նորից լաղթանակում էր—կատարեալ աջողութիւն...: Նրա զօրեղ ցնցումների սովոր նետրդերն արդէն հանգստացել էին: Հեշտանքով դողդոջում էին նրա բեխերը և աչքերի մէջ ագահութեան կրակներ բորբոքում: Նա շատ լաւ էր զգում իրեն, ատամների արանքից շվշվացնում, ծովալին խոնաւ. օդը խորը ներս քաշում, չորս կողմը նալում ու, երբ աչքերը կանգ էին առնում Գաւըիլիալի վրալ, բարեսրութեամբ ժայռում:

Քամի բարձրացաւ և զարթեցրեց ծովը, որի վրայ լանկարծ մանր մանր կոհակներ խաղացին: Ամպերն ասես թէ աւելի բարակել ու թափանցիկ էին դարձել, բայց բոլոր երկինքը պատաճ էր ամպերով: Զնալելով որ քամին, թէպէտ դեռ թեթև, ազատ թոչում էր ծովի վրալ, բայց էլի ամպերը մնացել էին անշարժ և կարծես մի սոսկուկան, տաղտուկ բան էին միտք անում:

—Դէ, ախալեր զան, ժամանակ է, ուշքի արիւ Հէնց գիտենաս հոգիդ ջանիցդ հուսալ տուել, դուրս են հանել, մենակ մէկ տոպըրակ են թողել ոսկըներ լցրածւ Սիրելի բարեկամ...: Ել ամեն բան պրծանք: Հէլ...:

Բայց և այնպէս Գաւըիլիալին հաճելի էր մարդու ձալն լսել, թէկուզ ալդ՝ ԶԵՂԿԱՇի ձալնը լինէր:

—Լսում եմ, —կտմացուկ ասաց նա:

—Բաս լաւ: Վախկոտ...: Արի դու զեկը բռնի, իսկ ես թի քաշեմ: բեզարեցիր հալբաթ:

Գաւըիլան մեքենաբար տեղը փոխեց: Երբ որ ԶԵՂ-

կաշը, տեղերը փոխելիս, նրա երեսին նայելով նկատեց, որ խեղճ տղան դողդոջուն ոտների վրայ կանգնած տեղը տառանելում է, սկսաւ աւելի ևս խղճալ նրան։ Նա նրա ուսը թոթուեց։

— Հը՛, հը՛, մի վախի։ Դէ լաւ էլ փող աշխատեցիր ախր։ Ես քեզ, ախպեր ջան, շատ կտամ։ Մի քըսանհնգանոց կուզե՞ս, հաւ։

— Ինձ... ոչինչ պէտքը չէ։ Միայն թէ ափ դուրս գալի...։

Զելկաշը թափ տուաւ ձեռքը, թքեց ու սկսաւ թիավարել՝ թիերը իւր երկայն ձեռներով շատ յետ ձբգելով։

Տովը զարթնեց։ Նա խայտում էր մանր ալիքներով—ծնունդ էր տալիս նրանց, փրփուրի երեզով զարդարում, միմեանց բաղխում ու մանրիկ փոշի դարձնում։ Փրփուրը հալչելով ֆշշում էր ու հառաջում,—և շուրջ ամեն ինչ լի էր ներդաշնակ շշուկով ու ճըղփիւնով։ Խաւարն ասես թէ աւելի առողջացած լինէր։

— Դէ, գու ինձ ասա...—խօսեց Զելկաշը, — հիմի կգնաս տուն, կպսակուես, կսկսես գետինը վարել, ցորեն ցանել, կինդ երեխերք կբերի, ուտելիքի պակասութիւն կունենաս. դէ, սաղ կթանքդ ջանդ պիտի դուրս գալ...։ Հը՛, ինչ կեանք է սա։ Ի՞նչ համ կալ դրա մէջ։

— Ի՞նչ համ պիտի լինի, — վեհերկոտութեամբ ու ցնցուելով պատասխանեց Գաւրիլան, — էլ ինչ խօսեմ...։

Տեղտեղ քամին պատառում էր ամպերը և պատառուածքից նայում էին երկնքի կապուտ կտորները՝ մի-երկու աստղով զարդարուն։ Աստղերն անդրադառնալով ծովի մէջ, թռչկոտում էին ալիքների վրայ ու մէկ անհետանում, մէկ՝ նորից փալլում։

— Դէպի աջ բռնի, — ասաց Զելկաշը։ — Էս է, շուտով կհասնենք Հալդա...։ Պրծանք։ Լաւ շոհեցանք։

Տեսար ինչ բան է...: Մէկ գիշերուալ մէջ—կէս հաղար չանչեցի. հը՛. ո՞նց է:

—կէս հազար,—կասկածանքով երկարացրեց Գաւրիլան, բայց իսկոյն էլ վախեցաւ ու ոտքով հակերին խփելով շտավով հարցրեց.—էս Բնչ բան է որ:

—էս—աբրուշում է: Թանկնոց բան: Սաղը որ իրա գնով ծախելու լինես, հազարը կանց կենայ: Եհ, ասենք ես էժան եմ գին դնում...: Լաւ չէր...:

—Հմ... համ, —հարցական կերպով երկարացրեց Գաւրիլան: —Երնէկ մի էսքան բան էլ իմ ձեռս ընկնէր, —հառաչեց նա միտքը բերելով գիւղը, իւր ամբողջ աղքատիկ տնտեսութիւնը, նրա կարեքները, իւր մօրը և բոլոր այն հեռաւոր, սրտին մօտիկ բաները, որոնց խաթրու ինքը աշխատանքի էր դուրս եկել, որոնց խաթրու ալսքան տանջուել էր գիշերս: Նրան պաշարեցին լիշողութիւնները իրենց գիւղի մասին, որը ոլորկ սարի վրայով ձգուած էր գէպի թխտենու, սպիտակ ուռենու, վազենու, վալրի կեռասենու անտառի մէջ ծածկուած գետակը.... Այս լիշողութիւնները ջերմացրին նրան և մի քիչ սիրտ տուին:—Եհ, ինչ բան կլինէր...՝ թախճալի լոգոց հանեց նա:

—Ի՞նչ խօսք... կարծում եմ իսկոյն երկաթուղի կը-նստէիր ու թռի տուն...: Ու ո՞նց աղջկերքը պիտի սերէին քեզ, իւֆ, ո՞նց...: Ո՞րը կուգես ջոկի: Տուն կշնէիր... Եհ, ասենք, տուն շինելու համար փողը մի քիչ պակաս կգար...

—Դրուստ ես ասում... տուն շինելու համար պակաս կգար: Մեզանում փէտը թանկ է:

—Ե, ինչ արած: Հինը կթազացնէիր: Ո՞նց է, ձի ունիս:

—Զի: Ունենալով ունիմ, բայց շատ է ծեր... անպիտանը:

—Դէ, ուրեմն ձի կառնէիր: Մի լաւաւ ձի. կով...

ոչխարներ...: Ամեն տեսակ հաւեղէն... հը՛:

— Ել մի ասի...: Որ էդպիսի մի բան լինէր: Օքր Աստուած ջան. ինչ կեանք կունենալիի...:

— Հմ-հա... ախարներ-ջան, ոչինչ, եօլա կգնայիր...: Ես էլ եմ ալդ բանում մի քիչ զատ հասկանում: Ես էլ եմ մի վախտ ինձ համար բուն ունեցել...: Հէրս գեղի մէջ առաջի հարուստներից էր...:

Զելկաշը դանդաղ թիավարում էր: Մակրկը տատանւում էր ալիքների վրայ, որոնք խփում էին նրակողերին, և հտզիւ հաղ մութ ծովի վրայ առաջ գնում, մինչ ծովը քանի գնում աւելի ու աւելի է կայտուում: Երկու հոգի, ջրի երեսին օրօրուելով ցնորքների մէջ էին թողուել և մտախոհութեամբ չորս բոլորքը նայում: Զելկաշը դիտմամբ էր գիւղի մասին խօսք բացարել, որ Գաւրիլիալին մի քիչ սիրտ տայ ու հանգըստացնի: Սկզբում նա խօսում էր ու քթի տակ ծիծողում, բայց լետոյ խօսակցին կշտամբելով ու լիշեցնելով գիւղական կեանքի քաղցրութիւնները, որոնցից ինքը վաղուց է լուսախար եղած մոռացել էր ալդ ամենը և միայն ալժմս միտքը բերել — նա կտմաց կամաց խորացաւ, և փոխանակ որ երիտասարդին հարց ու փորձ անէր նրանց գիւղի և նրա գործերի մասին, ինքն էլ չնկատելով ալդ, սկսաւ ինքը պատմել.

Դիւղացու կեանքի մէջ, ախարներ ջան, առջի բոնը ազատութիւնն է: Ինքդ քու գլխի տէրն ես: Քու տունդ ունիս — թէկուզ մի զատ էլ չարժի — էլի քոնն է: Քո հողդ ունիս — թէկուզ մէկ ափ տեղ լինի — էլի քոնն է: Քու հաւդ է, քու ձուն, քու խնձորը: Դու քու հողի թագաւորն ես...: Մէկ էլ կարգ կալ, կանոն կալ... Առաւօտը որ վեր կացար — գործ կայ... գարնանը մի տեսակ գործ, ամառը ուրիշ, աշնանը, ձմեռը — էլի ուրիշ: Ուր էլ որ գնաս, վերջը քու տունդ կդառնասու: Տաք... Հանգիստ...: Հօ թագաւոր ես: Ենպէս չի, —

ոգևորուած վերջացրեց Զելկաշը գիւղական լարմարութիւնների ու իրաւունքների երկար շարքը, և չգիտեսինչու մոռացաւ պարտաւորութիւնները լիշել:

Գաւրիլան հետաքրքրութեամբ նալում էր նրանու նոլնալէս ոգևորուում: Նա որ խօսակցութեան ժամանակ արդէն մոռացել էր, թէ ում հետ էր իւր գործը և իւր առաջ տեսնում էր միայն իրեն պէս մի գեղացի, որը շատ սերունդների քրտինքովը կալած էր հողին, մանկական լիշողութիւններով կապուած էր նրա հետ, բայց ինքնակամ կերպով անջատուած էր և գրահամար էլ իւր արժանի պատիմը կրած:

— Եդ սղիղ ես տառում, հոգի ջան: Ախ, շատ ուղիղ: Թէ, հիմի քեզ մտիկ արա, Բնչ ես դու առանց հողի. հը...: Հողը, ախպեր ջան, ոնց որ հարազատ մօրդ, իր օրում չես մոռնայ:

Զելկաշը մտքի մէջ ընկաւ... Նա զգաց իւր կըրծքի կփղիչ գըգիռը, որը դուրս էր գալիս հէնց որ մէկը նրա ինքնասիրութեանը — անհաշիւ խիզախութեան ինքնասիրութեանը — կպչում էր, մանաւանդ երբ ալդ մէկը իւր աչքում արժէք չունէր:

— Դուս ես տալիս..., — ասաց նա կատաղաբար. — չինք կարծում ես, թէ էս ամենը ես դրուստ եմ տասում...: Ոնց չէ, տես, պինդ բռնի...:

— Զարմանք մարդ ես, ճշմարիտ..., — դարձեալ կոտրուեցաւ Գաւրիլան: — Խօսքս հօ քո վրայ չի: Քեզ պէս ներ շատ: Ե՛հ, ինչքան անրադդ մարդիկ կան աշխարքիս վրայ...: Անտուն-անտէր ման եկող...:

— Իշի ձագ, եկ թիերը վեր առ, — կարճ կտրեց Զելկաշը զսպելով: Հայհոյանքների ամբողջ հեղեղը, որ հաւաքուած էր կոկորդում: Նրանք նորից վոխեցին տեղերը, որի միջոցին Զելկաշը հակերի վրալից ղեկի կողմն անցնելիս սուր ցանկութիւն զգաց Գաւրիլախն այնպէս մի հասցնել, որ ջուրը գլորուի, բայց միւնոյն ժամա-

Դակ այնքան ոլժ չունեցաւ, որ նրա երեսին մտիկ տար: Կարճ խօսակցութիւնը լռեց, բայց ալժմս մինչեւ անդամ Գաւրիւալի լոռութիւնից գեղացու հոտ էր փը: Ճում.... Զելկաշը լիշեց անցեալը, մոռանալով ղեկավարել մակոյկը, որը ալեկոծութիւնից խոտորուած դէպի ծովն էր գնում: Կարծես թէ ալիքները հասկանում էին, որ այս մակոյկը կորցրել է իւր նպատակը, և, աւելի ու աւելի վեր-վեր ձգելով, հեշտութեամբ խաղ էին անում հետը, թիակների բաղվումից քնքոյշ կապուտ գոյնով հրհրատում: Խսկ Զելկաշի առջևից արագ-արագ անցնում էին անցեալի, հեռաւոր անցեալի պատ'երները, որոնք ներկալիցը, սինլքոր կեանքի պատուէրով: Նա լիշեց իւր մանկութիւնը, իրենց գիւղը, իւր մօրը, որ կարմրաթուշ, մոխրագոյն բարի աչքերով մի փափիկ կին էր, հօրը - ժանտ դէմքով շիկամօրուս մի հսկայ: Յիշեց իւր փեսայութիւնը, կնոջը, սետչեալ, երկարահիւս չաղլիկ, փափլիկ, զուարթ Անվիսալին... տեսաւ իրեն նորից սիրուն, գուարդիայի զինուոր եղած, նորից տեսաւ հօրը ալեոր և աշխատանքից կղացած, նոյնպէս և մօրը — կնճռոտած, գետնին կպած, դիտեց նաև այն տեսարանը, թէ ինչպէս գեղացիք ընդառաջ էին եկել, երբ նա ծառալութիւնից տուն էր դառնում: տեսաւ նաև թէ ինչպէս հալրը հպարտանում էր ամբողջ գեղի առաջ իւր Գրիգորիով, թաւարեխ, առողջ զինուոր, ճարպիկ ու գեղեցիկ Գրիգորի որդով.... Յիշողութիւնը, դժբաղդների այս պատուհասը, մինչեւ անդամ անցեալի քարերն է կենդանացնում և նոյն խսկ անցեալում խմած թոլինի մէջ մեղը է կաթեցնում... և այս բոլորը նրա համար, որպէս զի ոչնչացնէ մարդուս՝ զգալ տալով իւր սիալները և, նրան ոլդ անցեալը սիրել ստիպելով, պագալի լոլսից կտրէ:

Զելկաշն զգաց հալրենի օդի հանգուցիչ, փաղա-

քուշ հովը, որ իւր հետ ըերռամ էր և մալրական սիրազեղ խօսքերը, և իսկական գեղացի հօր խրատները, շատ մոռացուած հնչիւններ, և հէնց նոր ստուցից հալած, հէնց նոր վարած և հէնց նոր աշնանացանի զմբուխտի պէս կանաչ մետաքսով պատած մալր հողի ախորժ հոտը...: Եւ նա երբ զգաց շուարած, ընկած, խղճուկ ու մենակ, արմատահան եղած ու առմիշտ դեն ձգած այն կեանքի ընթացքից, որի մէջ մշակուած, պատրաստուած էր իւր երակների մէջ հոսողարիւնը:

— Հէր. Էս ուր ենք գնում,— հարցրեց լանկարծ Գաւրիլան:

Զելկաշը ցնցուեցաւ և գիշատչի անհանգիստ հալեացքով չորս կողմը նայեցաւ:

— Իրուստ, գրողը տանի, էս ուր ենք եկել...: Վնաս չունի...: Հապա մի քիչ զու տու...: Էս ըոպէիս կհասնենք:

— Մտքով էիր անցել, — ժպտալով հարցրեց Գաւրիլան:

Զելկաշը ուշադրութեամբ Գաւրիլալին նալեցաւ, Երիտասարդը բոլորովին ուշքի էր եկել. նա հանգիստ էր, զուարժ և մինչև անգամ կարծես թէ լաղթանակում: Նա շատ ջահէլ էր և նրա սաղ կեանքը իւր ձեռքն էր: Եւ ոչինչ էլ չէր հասկանում: Այդ լաւ չէր: Դուցէհողը պահպանէ նրան...: Երբ որ այս բաները Զելկաշի մտքովն անցան, նա աւելի ևս տիրեց և Գաւրիլալի հարցին մռալլած ասաց.

— Դադել եմ...: Համ էլ մակոլկը օրօրւում է...

— Եղ ուղիղ է...: Ասել է, որ մենք այլ ևս էս բաներով չենք բռնուի, — և նա ոտքով հակերին խփեց:

— Զէ... Հանգիստ կաց: Էս ըոպէիս կյանձնեմ ու փողը կստանամ...: Հմ—Հա...

— Հինգ հարբեր:

—Պակաս չի... .

—Փող եմ ասում է... : Որ իմս լիներ... : Է՞շ, ինչ
օրիկ պիտի բացուեր... :

—Դեղ կտանէիր:

—Ի՞նչ խօսք: Խօկոյն... .

Եւ Գաւըիլան անձնատուր եղաւ ցնորդների: Զելկաշն ասես թէ տեղում մեխուած լիներ: Բեխերը կախէին ընկած, աջ կողքը, ալիքների ցալտերից թրջուելէր, աչքերը փոս էին ընկել ու փալլը կորցրել: Նա շատ խղճալի էր և ծանրացել: Նրա կերպարանքի մէջ բոլոր գիշատիչ կողմերը ծածկուել էին՝ ստորացած մտախոհութիւնից, որը նոյն իսկ նրա կեղտոտ շապկի ծալքերից էր կաթում:

—Ես էլ եմ կարգին դադընել... : Սաղ ջարդուել եմ:

—Ես ըոպէիս կը հասնենք... : Ա՛յ որտեղ է... :

Զելկաշը լանկարծ պտոյտ տուեց մակուկը և ուղղեց գէպի մի սև բան, որ ջրի միջից դուրս էր ցցուած: Երկինքը նորից ամպերով ծածկուեցաւ և սկսաւ շաղ տալ մանր տաք անձրև, որ ալիքների կատարներին ընկնելով ուրախ ձալներ էր հանում:

—Կաց: Կամաց, —կարգադրեց Զելկաշը:

Մակուկի քիթը նաւի կողին դիպաւ:

—Քնած են, ինչ է, էս ախմախները... , —քըթմըն-ջում էր Զելկաշը կեռիկը ձգելով ինչ որ թոկերի, որոնք նաւի վրալից ցած էին իջել: —Աստիճանները չեն իջեցրել... : Անձրևն էլ եկաւ... կարծես չէր կարող մի քիչ առաջ գալ: Հէլ, սպունգներ... : Հէլ, հէլ... :

— Սելկաշ, դժու ես, —լսուեց վելևից մի փաղաքուշմընոց:

—Դէ, աստիճանները իջեցրէք:

—Կալիմերա, Սելկաշ:

—Դու աստիճաններն իջեցրու, մուխի կախած սատանալ, —գոռաց Զելկաշը:

— 0, էսօր նեղացած ես եկել...: Ելմա:

— Բարձրացիր, Գաւրիլա, — ասաց Զելկաշը և ընկերոջը:

Մի ակնթարթում արդէն նրանք նաւի վրայ էին, ուր երեք մօրուսաւոր սև պատկերներ, իրար հետ մի տարօրինակ, ականջ ծակող լեզուով տաք տաք խօսելով նաւի ափից Զելկաշի մակայկի մէջն էին դիտում։ Զորդ բրդը, երկար վերարկուի մէջ փաթաթուած, մօտեցաւ նրան և անխօս ձեռքը սեղմեց, ապա կասկածանքով Գաւրիլալին նալեցաւ։

— Առաւոտու փողը պշտրաստ լինի, — կարճ ասաց Զելկաշը։ — Իսկ ալժմ գնամ քնեմ։ Գաւրիլա, գնանք։ Քաղցած հօ չես։

— Լաւ է քնենք..., — պատասխանեց Գաւրիլան, և հինգ բոպէից արդէն խորթում էր նաւի կեղտոտ ամբարում, իսկ Զելկաշը, կողքին նստած, իւր ոտքի վրայ փորձում էր մէկի կօշիկը և, մտախոհութեամբ կողքի թքելով, առամների արանքով չարացած ու տխուր շըվշըվացնում։ Յետոյ նա պառկեցաւ Գաւրիլալի կողքին և, առանց ոտի մէկ կօշիկը հանելու, ձեռները գլխի տակը ծալեց, սկսաւ աչքերը լառած նաւի տախտակամածին նայել ու բեխերը շարժել։

Նաւը թեթևակի օրօրւում էր ալէկոծուող ջրի վըքայ, մէկ տեղից լսում էր փայտի խղճալի ճրճողը, անձրեւ փափուկ-փափուկ թափում էր տախտակամածի վրայ և ալիքները բաղխում էին նաւի կողերին...։ Թախմածի էր ալդ ամենը և հնչում որպէս մայրական օրօր, որ իր զաւակի անլոյս բաղդն է երգում...։

Զելկաշը, ատամները կրճտացնելով, գլուխը բարձրացրեց ու չորս կողմը նալեցաւ... և, մի բան շշնշալով, նորից պառկեցաւ...։ Ոտները չուած՝ նա խոշոր մկրատի էր նմանել։

III

Առաջին զարթնողը Զելկաշն եղաւ. նա անհանգստութեամբ չորս կողմը դիմեց, իսկոյն հանգստացաւ ու նայեցաւ Գաւրիլային, որ գեռ քնած էր: Սա անուշ խրխոռում էր և իւր մանկական, առողջ, արևակէզ ամբողջ գէմքովը մի բանի համար ծիծաղում: Զելկաշը լոգոց հանեց և թոկէ նեղ աստիճաններով վերև բարձրացաւ: Ամբարի մուտքից նայում էր արճճագոյն երկընքի կտորը: Լոյս էր, բայց աշնան նման տաղտուկու մթագնած:

Զելկաշը երկու ժամից լետ դարձաւ: Նրա գէմքը կարմրել էր, բեխերը կտրճի նման վերև ոլորած, շըրթունքներին խաղում էր բարեհոգի—զուարթ ժպիտը: Նա հագել էր երկալն ճտքաւոր պլինդ կօշիկ, բաճկոն, կաշուէ վարտիկ, և նման էր որսորդի: Նրա բոլոր զորերը մաշուած, բայց ամուր էին և շատ էլ սազ էին գալիս նրան: Չորերը նրան լալնացրել, նիշարութիւնը ծածկել էին և կերպարանքին քաջարի ձեւ տուել:

—Հէլ, հորդուկ, վեր կաց..., —ոտքովը բոթեց նա Գաւրիլային:

Գաւրիլան վեր թռաւ տեղից և, քնաթաթախ, նրան չճանաչելով, պղտոր աչքերով վախեցած վրան նայեցաւ, Զելկաշը բարձր ծիծաղեցաւ:

—Դու սրան տես..., —վերջապէս լալն ժպտաց: Գաւրիլան: —Աղա է դարձել:

—Եդ մեզ մօտ ձեռաց լինում է ու: Է՛, ինչ վախուկոտն ես եղել. վալվար: Երէկ գիշեր էդ ինչքան անգամ ուզում էիր թէ մեռնես. հը՞ էդ ասմ:

—Դէ մի ինքդ պատի. առջի անգամն էր, որ էս պիսի բանի մէջ էի գտնւում: Հօ կարելի էր հօգովարմնով կորչել:

—Մէկ էլ որ լինէր կգնալի՞ր, հը՞:
 —Մէկ էլ...: Ախը... ես... ոնց ասեմ...: Նայե-
 լով... ինչ շահ կուր... էդ է բանը:
 —Ասենք թէ երկու հարիւրանց լինէր:
 —Երկու հարիւր: Վնաս չունի... Որ ըտենց լի-
 նի կարելի է...:
 —Կաղ: Հապան որ բռնուիս...:
 —Ով է իմանում... բալքի չեմ բռնում,—ժպտաց
 Գաւրիլան:—Զես բռնուի, բայց մարդ կդառնաս:
 Զելիազը բարձր ձայնով ուրախ-ուրախ ծիծաղում
 էր:
 —Իէ, լաւ, հանաքը դէնը: Վեր կաց, ափ դուրս
 գնանք...: Պատրաստուի:
 —Ի՞նչ ունիմ պատրաստուելու: Ես պատրաստ
 եմ...:

Եւ ահա նրանք դարձեալ մակոյիկի մէջ են: Զել-
 իազը ղեկի մօտ, Գաւրիլան—թիերի: Նրանց վերևը
 մոխրագոյն երկինքը ծածկուած է հաւասարապէս փը-
 ռուած ամպերով, իսկ մակոյիկի հետ խաղ է անում
 պղտոր-կանաչ ծովը՝ աղմկալի կերպով ձգելով նրան ա-
 լիքների վրայ, որոնք դեռ ևս մանր են.և իրենց պայ-
 ծառ, աղի ցալտերը ուրախ-ուրախ շաղ են տալիս մա-
 կոյիկի մէջ: Մակոյիկի քթի վրայից հեռուն երեսում է ա-
 փի տւազոտ շերտը, իսկ ղեկի քամակին հեռու ատրած-
 ում է ազատ, կալտուուն ծովը, որի վրայ տեղ չի
 մնացել, որ ակօսուած չլինի վազվզող ալիքների երամ-
 ներով, որոնք արդէն տեղ-տեղ զարդարուած են փըր-
 փուրի շքեղ ու սպիտակ երիզով: Իսկ այնտեղ, հեռուն,
 երեսում են ծովի կրծքին ծփացող բազմաթիւ նաւեր,
 իսկ ձախ կողմը հեռուն—կալմերի մի ամբողջ անտառ
 և քաղաքի տների սպիտակ կոյտեր: Այն կողմից ծովի
 մքայ զեղուում է մի խուլ աղմուկ, որ որոտում է և,
 ալիքների ճղփիւնի հետ միախառնուած, մի գեղեցիկ,

զօրեղ երաժշտութիւն ներդաշնակում...: Եւ այս ամենի վրայ ձգուած է մոխրագոյն մշուշի մի բարակ քօղ, որ առարկանները բաժանում է իրարից...:

— Իւլլաֆ. իրիկնապահին փոթորիկ պիտի լինի որ...
— ասաց Զելկաշը գլխով ծովը ցուց տալով:

— Փոթորիկ, — հարցրեց Գաւրիլան թիերովը զօրեղ կերպով ալիքները կտրելով: Նա արդէն ոտքից գլուխը թրջուել էր ցալտերից, որ քամին շաղ էր տալիս ամբողջ ծովի վրայ:

— Հա... — հաստատեց Զելկաշը:

Գաւրիլան փորձող հայեացք ձգեց նրա վրայ...:
— Հը', ինչքան տուին, — հարցրեց նա վերջապէս տեսնելով, որ Զելկաշը մտադիր չէ խօսք բանալու:

— Ա՛յ, — ասաց Զելկաշը զրպանից մի բան հանելով և նրան մեկնելով:

Գաւրիլան տեսաւ ծիածանագոյն թղթերն ու նրա աչքի առաջ ամեն բան պայծառ, ծիածանի գոյն տուաւ:

— Վա... — իսկ ես էնպէս էի կարծում, թէ սուտ ես ասում...: Էդ... որքան է:

— Հինգհարիւր քառասուն, Լաւ է:
— Լաւ..., — շշնչաց Գաւրիլան ագահ աչքերը ձգելով հինգհարիւր քառասունին, որ Զելկաշը նորից գրպանն էր զնում: — Ե՞ — Էհ...: Էդքան որ փող ունենալի... — և նա հոգեմաշ կերպով հառաչեց:

— Տես թէ ինչ քէֆ ենք անելու մէկ տեղ, տղալ, — ողենորուած բացականչեց Զելկաշը — Իւլլաֆ, կը կոնծենք որ...: Մի վախի, ախակեր ջան, ես քու փայդ կտամ...: Քառասուն կտամ. Հա: Հերիք է: Ուզում ես էս բոպէիս տամ:

— Թէ որ... տալիս ես... քու քէֆը չէ: Կվերցնեմ: Գաւրիլան ամբողջ մարմնով դողդողում էր ակընկալութիւնից, ալլ և մի սուր բանից, որ կրծում էր նրա կուրծքը:

— Հա, հա, հա....: Խենդուլիկու Կվերցնեմ: Աեր
առ, ախալեր ջան, խնդրեմ, Նատ եմ խնդրում, վեր առ:
Խնդս էլ չգիտեմ, թէ ինչ եմ անելու էսքան փողը:
Նա, վերցըու, մի քիչ թեթևացըու....:

Զելկաշը մի քանի կարմիր թղթադրամ երկարաց-
րեց Գաւրիլախին: Սա գողդով ձեռքով վերցրեց փողը,
բայց թողեց թիերը և, աչքերը ագահութեամբ չռած ու
ներս, կրծքի մէջ աղմկալի օդ քաշելով, հենց գիտենաս
մի այրող բան էր խմում, սկսաւ փողերը թևի տակ
ներսը մի տեղ թաքցնել: Զելկաշը ծաղրական ժպտով
գիտում էր նրան: Իսկ Գաւրիլան նորից թիերը ձեռք
առած սկսաւ գրգռուած, շտապով թիավարել, կարծես
մի բանից վախում լինէր, և աչքերը ներքև էր ձգել:
Նրա ուսերն ու ականջները ցնցւում էին:

— Օ՛, ագահ ես եղել....: Լաւ բան չի....: Բայց
զարմանալու բան չկայ..., գեղջցի ես հո..., — մտախո-
հութեամբ ասաց Զելկաշը:

— Ախր ձեռիդ որ փող լինի, ինչե՞ր չես անի... —
բացականչեց Գաւրիլան լանկարծ սաստիկ լուզուած: Եւ
նա հատ ընդհատ, շտապով, կարծես իւր մտքերի ե-
տևից հասնելու ցանկութեամբ և բառերը թոցնելով
սկսաւ խօսել գիւղական կեանքի մասին, երբ որ փող
ունիս և երբ որ փող չունիս: Պատիւ, լիութիւն, ա-
զատ կեանք, ուրախութիւն....:

Զելկաշը ուշադրութեամբ, լուրջ դէմքով և մի ինչ
որ մտքի վրայ աչքերը կկոցած լսում էր նրան: Ժա-
մանակ առ ժամանակ նա գոհ սրտով ժպտում էր:

— Հասանք, — վերջապէս Զելկաշն ընդհատեց Գաւ-
րիլախի խօսքը:

Ալիքը վեր առաւ մակոյկն ու լարմարաւոր կեր-
պով աւազի մէջ խրեց:

— Իէ, ախալեր ջան, հիմի վերջացաւ: Մենակ պէտք
է մակոյկը մի քիչ հեռու քաշել, որ ալիքը չտանի:

Յետոյ կգան կվերցնեն, իսկ մենք մնաս բարով...: Ես-
տեղից մինչի քաղաք ութը վերստ է: Դու էլի քաղաք
ես դառնալու, հը:

Դեռ բարեհոգի-խորամանկ ժպիտը փալլում էր
Զելկաշի գէմքին և ինքն էլ ամբողջապէս մի այնպիսի
մարդու կերպարանք ունէր, որը իրեն համար շատ
հաճելի, իսկ Գաւրիլալի համար մի բոլորովին անակըն-
կալ բան էր մտադրուած անելու: Նեռքը գրադանը դը-
րած նա շըխշըխկացնում էր թուղթ փողերը:

— Զէ... չեմ գնալու...: Ես...—Գաւրիլան խեղզւում
էր, չէր կարողանում խօսել: Նրա մէջ եռ էին դալիս
անթիւ ցանկութիւններ, խօսքեր, զգացմունքներ, ո-
րոնք ոչնչացնում էին իրար և նրան կրակի պէս այ-
րում:

Զելկաշը շուարած նայում էր նրան:
— Ես ինչի ես ծովուում, տանջւում, — հարցրեց
նա:

— Ե՞նպէս...,—բայց Գաւրիլալի գէմքը մէկ կար-
մըրում էր, մէկ սպիտակում, և նա կանգնած տեղը
տրոր-տրոր էր գալիս՝ ոչ գիտես ուզում էր Զելկաշի
վրալ լարձակուի, ոչ գիտես՝ ուրիշ ցանկութիւնից տանջ-
ւում է, մի այնպիսի ցանկութիւն, որ դժուար էր կա-
տարել:

Զելկաշը տեսնելով նրա ալապիսի գրգիռը, իրեն
վատ զգաց: Սպասում էր, թէ ինչով է վերջանալու:

Գաւրիլան սկսաւ ծիծաղել մի այնպիսի տարօրի-
նակ ծիծաղով, որը կարծես աւելի լացի նման էր: Նա
գլուխը խոնարհել էր, Զելկաշը նրա գէմքի արտալայ-
տութիւնը չէր տեսնում, անորոշ կերպով երևում էին
միայն Գաւրիլալի ականջները, որոնք մէկ կարմըրում,
մէկ սպիտակում էին:

Դէհ, գրողը տանիքեղ, — թափ տուեց ձեռքը Զել-
կաշը: — Հո ինձ չես սկրահարուել: Տրորում է — հէնց

գիտենաս աղջիկ լինի...: Բալքի ինձանից բաժանուել չես ուզում: Հէլ, խոխա: Դէ մի խօսի, Է: Թէ չէ, էս է, գնում եմ...:

—Գնո՞ւմ ես, —հնչիւն ձայնով կանչեց Գաւրիլան: Աւազոտ ու անմարդաբնակ ափը նրա ձայնից դողաց և ծովի ալիքների ողողած աւազի գեղին ալիքներն ասես թէ լուզուեցան ծնցուեց նաև Զելկաշը: Յանկարծ Գաւրիլան պոկ եկաւ կանգնած տեղից, ընկաւ Զելկաշի ոտները, գրկեց ու դէպի իրեն քաշեց: Զելկաշն օրորուեց, ծանը կերպով նոտեց աւազի վրայ և, ատամները կրճտացնելով, օդի մէջ ուժով շարժեց իւր երկար ձեռքը, որ հուզ տուել, բռունցք էր զինել, Բայց նա կանգ տուաւ Գաւրիլայի ամօթխած ու աղերսալի շշունչից և չխփեց:

—Նոգի ջան..., ինձ տուր... ալդ փողերը: Տուր, Քիրիստոսի սիրուն...: Ինչքդ է փողը...: Ախր մէկ գիշերուալ մէջ... մենակ մէկ գիշեր...: Իսկ ես պէտք է տարիներ տանջուեմ...: Տուր... քեզ համար աղօթք կանեմ...: Մինչի մահս... երեք ժամում... քու հոգու փրկութեան համար...: Դու հո էդ փողը... քամու ես տալու... իսկ ես գործի կը զնէի...: Ե՛հ, տուր ինձ: Ախր դու բնչ ես անելու... Քեզ համար հո մի գժուար բան չէ: Մէկ գիշեր... ու կհարստանաս: Եկ, լաւութիւն արա: Մէկ բան է, դու հո կորած ես...: Ել դարձ չունիս...: Իսկ ես... ախ, տուր ինձ:

Զելկաշը, վախեցած, ապշած և չարտցած, նստած էր աւազի վրայ դէպի լետ կուացած ու ձեռները աւազին դէմ տուած, նստած էր, լուռ և աչքերը զարհութելի կերպով չուել երիտասարդի վրայ, որ գլուխը նրա ծընկների արանքը դրած խեղուելով իւր աղաչանքն էր շշնչում: Նա վերջապէս մի կողմ հրեց նրան, թուաւ, ոտքի ելաւ և, ձեռները գրպանը մտցնելով, ծիածանագոլն թղթերը Գաւրիլային շպրտեց:

— Վեր առ, շուն, Տրաքուի..., — կանչեց նա լուզումից, սուր կարեկցութիւնից ու դէպի այս ագահ ստրուկը տածած ատելութիւնից դողդողալով։ Եւ, փողերը շպրտելով, նա իրեն հերոս էր զգում։ Նրա աչքերի մէջ, նրա ամբողջ կերպարանքի մէջ խիզախութիւն էր փալում։

— Ես ինքս էի ուղում քեզ աւելի տալ, Երէկ խեղճս եկար... գեղը միտս ընկաւ..., Միտք էի անում — արի տղին լաւութիւն անեմ։ Սպասում էի տեսնեմ ինչ ես անելու, այիտի խնդրես թէ չէ։ Խոկ դու..., փալաս։ Մուրացկան...։ Ո՞նց կարելի է փողի համար մարդ ինքն իրեն էսպէս... տանջի։ Ախմախ։ Ագահ շներ...։ Գլուխներն են կորցնում..., Կոպէկի համար հոգիներդ կծախէք... հը...։

— Հոգի ջան... Աստուծոյ ողորմութիւնը արևիդ լինի։ Ես ինչքան բան ունիմ հիմի... հազարներ... ես հիմի... հարուստ եմ..., — ճշում էր Գաւրիլան հիացած։ ամբողջ մարմնով ցնցուելով ու փողը թեկ տակ, անթամիջին թաքցնելով։ — Ել հոդի ջան... սկի կեանքումս չեմ մոռանայ...։ Սկի...։ Կնկանս էլ, զաւակներիս էլ կասեմ, որ աղօթք անեն։

Զելկաշը լսում էր նրա ուրախական ողբերը, նայում էր փայլուն, ագահութեան հրճուանքից այլանդակուած դէմքին և զգում, որ ինքը — ալդ գողը, սինլքոր, հալրենի ամեն մի բանից կտրուած մարդը — երբէք ալդպէս ագահ, ստոր չի լինիլ և ինքն իրան տանուլ չի տալ։ Երբէք սրա նման չի գառնալ...։ Եւ այս միտքն ու զգացումը լցնելով նրան իւր ազատութեան ու խիզախութեան գիտակցութեամբ, պահում էին նրան ալստեղ, ծովի անապատալին ափին, Գաւրիլալի կողքին։

— Բաղդաւորացրեց ինձ, — կանչում էր Գաւրիլան և, բռնելով Զելկաշի ձեռքը, սկսաւ իւր երեսին հուպ տալ։

Զելկաշը լուռ էր և գալիք նման ատամները բաց
արել: Դաւրիլան շարունակ խօսում, սիրտն էր բաց
անում:

— Դու մի բանը տես, թէ ես ինչ էի միտք անում:
Եստեղ դառնալիս... տեսնում եմ... վող... միտք եմ
անում... արի դրան... թիով... գլխին մէկ հասցնեմ...
վողերն ինձ... նրան ծովը... այսինքն քեզ... հը: Ո՞վ
է նրան փնտրողը: Որ գտնեն էլ — չեն ուզենով իմա-
նալու, թէ ինչպէս, ով է նրան... սպանել: Են մարդը
չի, որ նրա համար դալմաղալ վերցնեն...: Աշխարքիս
երեսին աւելորդ մարդ է: Ո՞վ է նրան քոմակ գուրս
գալու Դու. բանը տես... հը...:

— Ցետ տուր փողը... — մռնչաց Զելկաշը Դաւրի-
լալի կոկորդից բռնելով:

Դաւրիլան մէկ, երկուս... փորձեց գուրս պրծնել,
բայց Զելկաշի ձեռքը օձի նման փաթթաթուել էր նրան...
շապիկը ճռռալով պատռուեց — և Դաւրիլան, աչքերը
խելագարի նման խոլոր-մոլոր արած, ձեռների մատնե-
րով օդի մէջ բռնելու ձեռ տնելով ու ոտները շարժե-
լով, պառկած էր աւագի վրայ: Զելկաշը — շիփ-շիտուկ,
չոր, գիշատիչ, չորագնած — բաց էր արել ատամները,
ծիծաղում էր բեկիբեկ, թռւնալից ծիծաղով, և բեխերը
ջղալնաբար թռչոտում էին նրա կոշտ, սուր գէմքի
վրայ: Նա իւր սաղ կեանքի մէջ շատ էր ծեծ կերել,
բայց երբէք այդպիսի ցաւ չէր գգացել, երբէք ալսքան
չէր չարացել:

— Հը, բաղդաւո՞ր ես, — ծիծաղելով հարցըեց նա
Դաւրիլալին և, մէջքը շուռ տալով, հեռացաւ, գէպի
քաղաք գնաց: Բայց գեռ երկու քայլ չէր վոխել, որ
Դաւրիլան կատուի նման կզացաւ, մէկ ծնկան վրա ե-
կաւ և ձեռքը օդի մէջ լալն շարժելով մի կլոր քար
շպրտեց նրա վրայ ու քենախնդրութեամբ կանչեց.

— Ը՞լ՛հ....

Զելկաշը բացականչեց, ձեռները ծործորակին տարաւ, տատանուեց դէպի առաջ, զուռ եկաւ դէպի Գաւու քիլան ու երեսն ի վայր աւագի վրայ փոռուեցաւ: Գաւու քիլան արդ տեսնելով սառեց, մնաց: Ահա Զելկաշը ոտքը շարժեց, ուզեց գլուխը բարձրացնել և, լարի նման ցնցուելով, ձգուեցաւ: Այն ժամանակ Գաւու քիլան սկսաւ փախչել դէպի հեռուն, ուր միգամած: տափաստանի վրայ կախ էր ընկած փրչոտ ու ամպը և մութն էր: Ալիքները, դէպի աւազն լորձանք տալիս խշխում էին միանալով նրա հետ և նորից լետ քաշւում: Փրփուրը թշշում էր և զրի ցալտերը թռչկոտում էին օդի մէջ:

Սկսաւ անձրեւ նժալ: Սկզբում, որ նոսր էր, շուտով խտացաւ, խոշորացաւ ու բարակ հասանքներով թափուեցաւ երկնքից: Զրի թելերից մի ահագին ցանց էր հիւսուել, ցանց, որ մի անգամից ծածկեց ծովի հեռաստանն էլ, տափաստանի հեռաստանն էլ: Գաւու քիլան անհետացաւ այդ ցանցի ետևը: Երկար ժամանակ ոչինչ չէր երևում բացի անձրեից ու ծովափին աւազի վրայ փոռուած երկար մարդուց: Բայց ահաւասիկ անձրեսի արանքից գարձեալ երևաց Գաւու քիլան, որ վազէ վազ յետ էր գալիս: Նա թռչունի նման սլանում էր և, Զելկաշի մօտը հասնելով, ընկաւ նրա առաջն ու սկսաւ նրան շուռ տոլ: Գաւու քիլալի ձեռքը թաթախուեց տաք, կարմիր լորձի մէջ...: Նա ցնցուեց և անմիտ, սպրդնած դէմքով յետ ընկրկեցաւ:

—Վեր կաց, ախպեր, — շշնչում էր նա Զելկաշի ականջին անձրեսի հանած աղմուկի մէջ:

Զելկաշն ուշքի եկաւ և Գաւու քիլալին բոթեց, հեռացըրեց իրանից ու խռալու ձայնով ասաց.

—Գնա՞... կորիր...

—Ների, ախպեր շան... սատանան սխալացրեց..., — դողդողալով շշնչում էր Գաւու քիլան Զելկաշի ձեռքը համբուրելով:

— Գնա... հեռացիր..., — խըլխում է սա:

— Թողութիւն արա... հոգի ջան: Ների...:

— Անիծ... գնա էստեղից...: Գնա, կորի, — յան-պարծ գոչեց Զելկաշն ու վեր կացաւ, աւազի վրալ նըս-տեց: Նրա դէմքը գժգոյն էր և չար, աչքերը պղտոր էին ու ծռուել, ասես թէ սաստիկ քունը տանելիս լի-ներ: — Ել բնչ ես ուզում...: Անելիքդ..., արիր, դէ գնա, էլի՛: Կորիր, — և ուզում էր վշտահար Գաւրիլալին ոտ-քով բըդել, բայց չկարողացաւ, և նորից կգլորուէր, թէ որ Գաւրիլան ուսերից գըկած չըրոնէր: Այժմ Զելկաշի երեսը Գաւրիլալի երեսի հետ մօտ-մօտի էին: Երկուսն էլ գժգոյն էին, խղճուկ և զարհուրելի:

— Թիւհ, — թքեց Զելկաշը իւր բանուսրի լալն բա-ցուած աչքերին:

Սա թեսովը հեզութեամբ սրբեց թուքն ու շշնչաց.

— Ինչ ուզում ես արա...: Զի՞նս չի դուրս գալ: Քրիստոսի խաթեր, ների:

— Գարշ...: Փսութիւն էլ չես կարում անես... — արհամարհանքով կանչեց Զելկաշը, բաճկոնի տակից պատուեց շապիկը և լուռ, երբեմն երբեմն ատամները կըճտացնելով, սկսաւ գլուխը կապել: — Փողը վերցրէր, — ատամի արանքից շշնչաց նա:

— Զեմ առել, ախպեր ջան, չեմ: Պէտքս չէ... էդ գլխիս փորձանք է միալն...:

Զելկաշը ձեռքը բաճկոնի գրպանը տարաւ, հանեց փողի կոլտը, մի հարիւրանոցը նորից գրպանը դըեց, իսկ մնացածը չպրտեց Գաւրիլալին:

— Վեր առ ու գնա:

— Զեմ առնի, ախպեր ջան...: Զեմ կարող: Ների:

— Առո, ասում եմ... — գոռաց Զելկաշը զարհուրելի կերպով աչքերը խոլորցնելով:

— Ների...: Էն ժամանակ կառնեմ... — երկչուութեամբ ասաց Գաւրիլան և Զելկաշի ոտներն ընկաւ իու:

նաւ աւազի վրալ, որը առատօրէն ջրւում էր անձրեւով:

— Սուտ ես ասում, կ'վեր առնես, հարամզադա: — Վասահօրէն ասաց Զելկաշը և, մազերից բռնած դժուարութեամբ նրա գլուխը վեր բարձրացնելով, փողը ճիսեց նրա երեսը:

— Առ, առ, Թող աշխատանքդ գուր կորած չլինի: Մի վախի, վերցրու: Մի տմաչի, որ քիչ էր մնացել մարդ սպանէիր: Ինձ ալէս մարդկանց համար ուժ դարդն է կտրուել, որ գլուխ ցաւացնի: Որ իմանան, ով գիտի հլա շնորհակալ էլ լինին: Առ, վերցրու: Ոչ ոք չի իմանալ էս բանից. արժի, որ վարձատրուիս: Եղալէս ալ....

Գաւրիլան տեսաւ, որ Զելկաշը ծիծաղում է, և թեթեռութիւն զգաց: Նա փողերը պինդ հուալ տուա. իւր ձեռքի մէջ:

— Ախաղեր ջան, կներես ինձ: Զես ուզում. հա, — արտասուքն աչքերին հարցրեց նա:

— Հոգի ջան... — նրա եղանակով սլատասխանեց Զելկաշը ոտքի կանգնելով ու օրօրուելով:

Ի՞նչ բանի համար: Ակի: Եսօր դու ինձ արիր. էգուց էլ ես քեզ կանեմ...:

Է՛հ, ախաղեր, ախաղեր, — գլուխը շարժելով տիրութեամբ ասաց Գաւրիլան:

Զելկաշը կանգնած էր նրա տուաջն ու տարօրինակ կերպով ժպտում, իսկ գլխի լոթը, կամաց-կամաց կաղմը բերելով, թրքական ֆասի նման դառնում:

Անձրեսը հեղեղի պէս թափւում էր: Ծովը խուլ քրթմնչում էր և այժմ արդէն ալիքները կատաղաբար ու ցասմամբ էին խփում ափին:

Երկուսն էլ լուռ էին:

— Դէ, մնաս բարով, — ծաղրանքով ու սառն կերպով ասաց Զելկաշը տեղիցը շարժուելով:

Նա օրօրւում էր, ոտները գողջողում էին, և բլուխն ալնպէս էր բռնել, որ ասես թէ վախենում էր թէ կորցնի:

— Ների, ախակեր չան..., — մի անգամ էլ ինդըեց Գաւրիլան:

— Բան չկար, — սառնութեամբ ասաց Զելկաշը ճամբար ընկնելով:

Նա, օրօրուելով, գնաց և ձախ ձեռքով շարունակ բռնած ունէր գլուխը, իսկ աջովը կամացուկ խարթեաշ բեխն էր քաշում:

Գաւրիլան երկար ժամանակ կանգնած մտիկ էր անում նրա ետևից մինչև որ անհետացաւ անձրեսի մէջ, որ աւելի ու աւելի լորդանալով բարակ, անվերջ հոսանքով թափւում էր ամպերից և տափաստանը պողպատի գոյն անթափանցելի մառախուղով ծածկւում:

Ապա Գաւրիլան հանեց թրջուած գլխարկը, երեսը խաչակնքեց, նայեց փողերին, որ պինդ հուա էր տուել ձեռքի մէջ, ազատ ու խորը շունչ քաշեց, փողը անթատակը թաքցրեց և խոզոր, հաստատ քայլերով հեռացաւ, Զելկաշի հակառակ կողմը գնաց:

Ծովը կոծում էր, ահագին ու ծանր ալիքներ շըպըրտում ափ և փշրում, ցայտեր ու փրփուր կազմում: Անձրես ուժով թակում էր ծովն ու գետինը... քամին ոռնում էր...: Նուրջ ամեն ինչ լցուել էր ողբով, մըռունչով, որոտով...: Անձրեւից ոչ ծովն էր երեսում և ոչ երկինքը:

Շուտով անձրւն ու ալիքների ցալտերը լուացին աւտզի կարմիր բիծը, ուր Զելկաշն էր պառկել, լուացին, ոչնչացըին Զելկաշի հետքը, ալլ և երիտասարդի հետքը ծովափնեալ տւազի վրալից...: Եւ ծովի անտպատալին ափին և ոչ մի լիշտակ մնաց այն փոքրիկ եղերերգութիւնից, որ տեղի էր ունեցել երկու հոգու մէջ: